



With the support of the
Erasmus+ Programme
of the European Union



კავკასიის უნივერსიტეტი
CAUCASUS UNIVERSITY

Եվրոպական ասոցացման գործընթացը Վրաստանում

Օժանդակ ձեռնարկ պատմության և
քաղաքացիական կրթության
ուսուցիչների համար



ԳՈՒՐԱՆԴԱ ՃԵԼԻՁԵ
ԷԿԱՏԵՐԻՆԵ ՔԱՐԴԱՎԱ
ՉՈՒՐԱԲ ԲՐԱԳՎԱՁԵ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՍՈՑԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Օժանդակ ձեռնարկ պատմության
և քաղաքացիական կրթության
ուսուցիչների համար

Թբիլիսի 2020

Պատրաստվել է Կովկասյան համալսարանի Եվրամիության
«Erasmus+» ծրագրերի աջակցությամբ՝ Ժան Մոնեի «Եվրոպական
ուսուցման եռանկյունի» նախագծի շրջանակներում. 611026-EPP-
1-2019-1-GEEPPJMO-PROJECT 611026-EPP-1-2019-1-GEEPPJMO-
PROJECT



With the support of the
Erasmus+ Programme
of the European Union

Նախագիծը համաֆինանսավորվել է Եվրամիության կողմից:
Սույն հրապարակումը արտացոլում է միայն հեղինակների
տեսակետը, և Եվրամիությունը պատասխանատու չէ
ներկայացված տեղեկատվության համար: Հեղինակների ոճը
պահպանված է:

Խմբագիրներ՝ Էկատերինե Քարդավա
Գուրանդա Ճելիձե

Թարգմանությունը՝ Չոյա Մխիթարյանի

Էջադրող՝ Գիորգի Բագրատիոնի

© Կովկասյան համալսարանի հրատարակչություն, 2020

ISBN: 978-9941-9702-6-9

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ.

Գուրանդա Ճելիձե՝ պատմության դոկտոր, Կովկասյան համալսարանի Հոմանսիտար և սոցիալական գիտությունների աֆիլացված պրոֆեսոր: Եվրոպական ուսումնասիրությունների բակալավրի կրթական ծրագրի ղեկավար, Ժան Մոնեի «Եվրոպական ուսուցման եռանկյունի» (TEESS) նախագծի համահեղինակ, փորձագետ և համակարգող, Եվրամիության տարբեր նախագծերի մասնակից, շուրջ 40 գիտական աշխատության հեղինակ. այդ թվում Եվրոպայի պատմության և Եվրամիության հարցերով, Եվրոպական ինտեգրման հարցերով դասընթացավար:

Էկատերինե Զարդավա՝ իրավագիտության դոկտոր, Կովկասյան համալսարանի Իրավունքի դպրոցի ասոցացված պրոֆեսոր (աֆիլացված), Գորիի պետական ուսումնական համալսարանի պրոֆեսոր, Ժան Մոնեի «Բացահայտե՛ք Եվրամիությունը Ասոցացման համաձայնագրում» (EUEAA) մոդուլի հեղինակ և համակարգող, Ժան Մոնեի «Եվրամիության իրավական դեմքը» (LFEU) նախագծի հեղինակ և համահամակարգող, Ժան Մոնեի «Եվրոպական ուսուցման եռանկյունի» նախագծի (TEESS) համահեղինակ և փորձագետ, «Եվրոպական ժամանակով» հեռուստահաղորդման համահեղինակ և բովանդակությունը ստեղծող (Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի աջակցությամբ), «Եվրոպական միության արդարադատության դատական փորձը և Վրաստանի աշխատանքային օրենսդրությունը» նախագծի հեղինակ և ղեկավար (Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի աջակցությամբ): «Եվրոպայի ժամանակով» ասոցիացիայի նախագահ:

Չուրաբ Բրազվաձե՝ Կովկասյան համալսարանի Հոմանսիտար և սոցիալական գիտությունների դպրոցի պրոֆեսոր, Ժան Մոնեի «Եվրոպական ուսուցման եռանկյունի» նախագծի (TEESS) փորձագետ, Վրաստանի հնագույն պատմության և հնագիտության հիմնախնդիրների շուրջ հարյուր գիտական աշխատանքների և 5 մենագրությունների հեղինակ, Եվրամիության և Եվրոպայի խորհրդի տարբեր նախագծերի մասնակից և ղեկավար, Վրաստանի մշակութային ժառանգության պահպանության ազգային գործակալության հնագիտական խորհրդի անդամ:

ԲՈՎԱԼՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակներից	7
Գուրանդա Ճելիձե	9
Ի՞նչ է նշանակում լինել «Եվրոպացի»	9
Եվրոպական կենսակերպը	9
Եվրամիության նպատակները	10
Եվրամիության արժեքները	11
Եվրամիության ստեղծումը	13
Եվրամիությանն անդամակցման պայմանները.....	20
Եվրամիության և Վրաստանի փոխհարաբերությունների ժամանակագրությունից....	22
Եվրոպայի հարևանության քաղաքականությունը (ENP) ...	24
Արևելյան գործընկերություն (EaP)	26
Էկատերինե Քարդավա	29
Եվրոպական ինտեգրման ընտրությունը՝ պաշտոնապես ճանաչված և հաստատված Վրաստանի կողմից	29
Վրաստանի իրավիճակը և անհրաժեշտությունները Ետխորհրդային դարաշրջանում և Եվրամիության հետ գործընկերության նշանակությունը	34
Եվրոպական միության օգնությամբ իրականացված նախագծերի բովանդակությունը	36
Նոր մարտահրավերներ Եվրոպական ինտեգրման գործընթացում	37

Եվրոպական միության անդամ պետությունների համագոյակցության կարգը	38
Եվրոպական միության ազատ ներքին շուկան	38
Ասոցացման համաձայնագիր (AA) և Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի (DCFTA)	40
Եվրոպական միության ազատության, անվտանգության և արդարադատության տարածքը . . .	42
Լեզվի հարգանքը Եվրոպական միությունում	43
Ընտանիքը և ամուսնությունը Եվրոպական միությունում	44
Եվրոպական միության օգնությունները Վրաստանին . . .	45
Աշխատանքային իրավունքների պաշտպանության եվրոպական չափորոշիչներն ու Ասոցացման համաձայնագիրը	46
Վրացական արտադրանքը Եվրոպական միության ներքին շուկայում	48
Պարենամթերքի անվաստությունը և ապրանքների անվտանգությունը՝ մարդու կյանքի և առողջության պահպանություն	50
Սպառողների իրավունքների պաշտպանություն	51
Հավասարության քաղաքականություն և պայքար խտրականության դեմ	52
2017-2020 թվականների ծրագրեր	55
Վրաստանի մշակութային ժառանգությունը Եվրոպական համատեքստում	55

Թանկագի՜ն ընթերցող, թանկագի՜ն ուսուցիչ, ինչպես նաև՝ աշակե՛րտ և ծնո՛ղ,

Մենք հավատում ենք, որ երբ դու ընտրություն ես կատարում, դու ոչ միայն ստեղծում ես թո՛ւ ապագան, այլև ազդում ես ուրիշների կյանքի վրա: Դա անհատի ուժն է հասարակության ձևավորման և զարգացման գործում: Ո՞ւմ և ի՞նչ ես ընտրում, դա է պայմանավորում նաև հետևանքը՝ թո՛ւ ճակատագիրը, ուրիշների ճակատագիրը: Հետևաբար, դու պատասխանատու ես ճիշտ ընտրություն կատարելու համար: Ընտրությունը բոլորն է: Ընտրությունն ազատ է: Մենք քեզ հետ կկիսվենք գիտելիքներով և կասենք քեզ ճշմարտությունը, որպեսզի թո՛ւ ընտրությունը հիմնված լինի իրականության, ճշմարիտ տեղեկատվության, թափանցիկ օբյեկտիվ հանգամանքների, փաստերի, հստակ օրինակների և հստակ թվերի վրա:

Ժամանակակից Վրաստանում առաջընթացի, զարգացման և ճիշտ ընտրության հիմքերից մեկն այն է, որ Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի հասկանա, թե ինչ են Եվրամիությունը, Ասոցացման համաձայնագիրը և Վրաստան-Եվրամիություն հարաբերությունները: Այդ նպատակով, Կովկասյան համալսարանը ձեռք է բերել «Էրազմուս+» ծրագրի Ժան Մոնեի Նախագծի ֆինանսավորում Եվրամիությունից և, համագործակցելով Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ, երկխոսության գործընթաց է սկսել աշակերտների հետ:

Եվրոպական ինտեգրումը Վրաստանի ազգային և կենսական շահերի մի մասն է, այն հանդիսանում է Վրաստանի ներքին քաղաքականության առարկա, Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու արժանապատիվ և պաշտպանված կենցաղի ապագայի մեջ ներդրումներ կատարելու գործընթաց:

Չարգացման եվրոպական ուղին Վրաստանի ժողովրդի և Վրաստան պետության պատմական և արժեքավոր ընտրությունն է:

**Գուրանդա Ճելիձե
Էկատերինե Քարդավա
Չուրաբ Բրազվաձե**

*Կովկասյան համալսարան (CU)
2020 թվական, Թբիլիսի*

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԼԻՆԵԼ «ԵՎՐՈՊԱՑԻ»

Մարդիկ հակված են ինքնության: Նրանք տարբեր ուղղությամբ են իրենց նույնականացնում, բայց հազվադեպ են փորձում ավելի բարձր և ընդարձակ մակարդակում նույնականացվել, քան միայն մեկ տարածաշրջանն է կամ մեկ երկիրը:

Այսիմաստով եվրոպական տերմինը կարելի է եզակի համարել: Այսօր «Եվրոպացի» կամ «Եվրոպական» հաճախ օգտագործվում է Եվրամիության քաղաքացիության համատեքստում: Այնպես որ, Եվրոպան այլևս պարզապես աշխարհագրություն չէ, Եվրոպան նաև գաղափար է: Եվրոպան ո՛չ մայրցամաք է, ո՛չ Էլ ավանդական ազգ-պետություն: Իրականում այն ո՛չ Էլ միայն տնտեսական դաշինք է: Այն Եվրոպական արժեքների վրա հիմնված պետությունների միություն է, և այդ արժեքներն ունեն նաև քաղաքական և իրավական բնույթ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԵՆՍԱԿԵՐՊԸ

Բավականին շատ մարդիկ, ներառյալ իրենք՝ Եվրոպացիները, քննադատում են Եվրոպա մայրցամաքում բնակվող տարբեր ազգություններին մեկ ընդհանուր սահմանման մեջ ընդհանրացնելու գաղափարը, այն դեպքում, երբ գործ ունենք բազմազան մշակույթի, լեզուների և պատմության հետ: Նրանք կարծես թե սխալված չեն իրենց փաստարկներում, բայց նրանց եզրակացությունը միևնույն է ճիշտ չէ, քանի որ Եվրամիության կարգախոսը՝ **«Միասնությունը բազմազանության մեջ է»** (*In varietate Concordia*) մեզ տալիս է համագոյակցության

և համագործակցության հնարավորություն եվրոպական կենսակերպի երաշխավոր ճանաչված արժեքների վրա հիմնված փորձով, երբ բոլորը կարող են բարձրացնել իրենց ծայրը, մասնակցել բազմազան հասարակության կառավարմանը, չվախենալ հնարավոր հետևանքներից, եթե նրանց գործողությունները չեն սահմանափակում այլ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Աջակցել եվրոպական արժեքների և սեփական քաղաքացիների բարեկեցության զարգացմանը:
- Ապահովել խաղաղություն, անվտանգություն և արդարադատություն:
- Ամրապնդել հասարակության կայուն զարգացում՝ հավասարակշռված տնտեսական աճի և գների կայունության, բարձր մրցակցային շուկայական տնտեսության, զբաղվածության և սոցիալական առաջընթացի միջոցով, բնապահպանական խնդիրների լուծմամբ:
- Պայքարել սոցիալական մեկուսացման և խտրականության ցանկացած դրսևորման դեմ:
- Աջակցել գիտատեխնիկական առաջընթացին:
- Եվրամիության երկրների միջև զարգացնել տնտեսական, սոցիալական, տարածքային միասնությունը և համերաշխությունը, ստեղծել ներքին շուկա՝ առանց մաքսային սահմանների՝ միմյանց համար խոչընդոտներ ստեղծելուց խուսափելու նպատակով:
- Հարգել հարուստ մշակութային և լեզվական բազմազանությունը:
- Չարգացնել տնտեսական և արժույթային միությունը և միմյանց (երկրները) հզորացնել միասնական արժույթով:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Եվրամիության արժեքներն ընդհանուր են նրա անդամ պետությունների համար, որոնց համար կարևորագույնն են *ինտեգրումը, համբերությունը, արդարությունն ու համերաշխությունը*: Նրանք մերժում են խտրականությունը: Այս արժեքները եվրոպական հասարակության անբաժան մասն են:

Մարդկային արժանապատվություն

Մարդկային արժանապատվությունն անձեռնմխելի է: Մենք պետք է հարգենք և պաշտպանենք այն: Արժանապատվությունը հիմնարար իրավունքների իրական հիմքն է:

Ազատություն

Մարդու անհատական ազատությունները՝ անձնական կյանքի, մտածողության ազատության, դավանանքի, հավաքների, խոսքի ազատության, պաշտպանված են Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական Միության խարտիայով:

Տեղաշարժման ազատությունը քաղաքացիներին իրավունք է տալիս ազատ տեղաշարժվել և ապրել Եվրամիության շրջանակներում:

Ժողովրդավարություն

Եվրամիության գործունեությունը հիմնվում է ներկայացուցչական ժողովրդավարության վրա: Եվրամիության քաղաքացի լինելն շնանակում է օգտվել քաղաքական իրավունքներից: Եվրամիության բոլոր չափահաս քաղաքացիներն իրավունք ունեն ներկայացնելու իրենց թեկնածությունը՝ ընտրվելու, օգտվելու քվեարկելու իրավունքից կամ իրենց բնակության երկրում կամ իրենց ծագման երկրում: Իշխանությունն ընտրվում է ժողովրդի կողմից, և դա ձեռք է բերվում արդար ընտրությունների

միջոցով, ինչը նշանակում է իշխանության պարտավորություններ ու պարտականություններ ժողովրդի առջև: Ժողովրդավարությունը միաժամանակ ապահովում է կայունություն, հետևողական զարգացում և անվտանգություն:

Հավասարություն

Օրենքի առջև հավասարությունը նշանակում է հավասար իրավունքներ բոլոր քաղաքացիների համար: Եվրոպական քաղաքականությունը հիմնված է կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքի վրա և հանդիսանում է եվրոպական ինտեգրման հիմքը: Այն տարածվում է բոլոր ոլորտներում: Հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը 1957 թվականին դարձավ Հռոմի պայմանագրի մաս:

Օրենքի գերակայություն

Եվրամիությունը հիմնված է Օրենքի գերակայության վրա: Եվրամիության բոլոր գործողությունները համահունչ են Եվրամիության անդամ երկրների կամավոր և ժողովրդավարական համաձայնագրերին: Օրենքը և արդարադատությունը աջակցված են անկախ դատական համակարգով: Եվրամիության երկրները վերջնական իրավասությունը փոխանցել են Եվրամիության արդարադատության դատարանին, որի որոշումները պետք է պահպանվեն և հարգվեն բոլորի կողմից: Եվրոպական ինտեգրումը նշանակում է օրենքի գերակայության վրա հիմնված կարգ, իսկ օրենքի գերակայությունը՝ ժողովրդի կողմից ընտրված իշխանության կողմից ընդունված օրենքների անխախտ պահպանում և քաղաքացիական հասարակության կողմից այդ օրենքների կիրառման արդյունավետության ստուգում / մշտադիտարկում:

Մարդու իրավունքներ

Եվրոպական գաղափարը մարդու ազատության և բոլորի հավասարության գերակայությունն է: Մարդը ունի բնական իրավունքներ: Մարդը ծնվում է ազատ: Նա ունի խոսքի, արտահայտվելու և անձնական ազատություն: Պետությունը չպետք է չարաշահի իր լիազորությունները, նա պետք է գտնի ճիշտ հավասարակշռությունը մարդու իրավունքների և պետության անվտանգության միջև:

Մարդու իրավունքները պաշտպանված են Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիայով: Սա ներառում է ազատություն խտրականությունից՝ սեռի, ռասայական կամ էթնիկ ծագման, կրոնի կամ դավանանքի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման հիմքով, անձնական տվյալների պաշտպանության կամ արդարադատության հասանելիության իրավունքներ:

2012 թվականին Եվրամիությանը շնորհվել է Նոբելյան մրցանակ Եվրոպայում խաղաղության, հաշտեցման, ժողովրդավարության և մարդու իրավունքներում ներդրած ավանդի համար:

Եվրամիության արժեքների զարգացումը, նրա խնդիրների իրականացումը, քաղաքացիների և անդամ պետությունների շահերի պաշտպանությունը, քաղաքականության արդյունավետությունն ու շարունակականությունն ապահովում են Եվրամիության քաղաքական ինստիտուտները: Յուրաքանչյուր հաստատություն գործում է իշխանության տարանջատման սկզբունքի համաձայն՝ իր իրավասությունների շրջանակներում: Եվրամիության քաղաքական ինստիտուտներն են՝ Եվրահանձնաժողովը, Եվրախորհրդարանը, Եվրոպական խորհուրդը, Եվրոպական միության խորհուրդը (Նախարարների խորհուրդ), Եվրոպական արդարադատության դատարանը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական աուդիտորների դատարանը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ

Մենք ճիշտ չենք լինի, եթե եվրոպական պետությունների պատմությունը նկարենք միայն վառ գույներով: Դարերը պահպանել են եվրոպական պետությունների միջև դիմակայությունների և պատերազմների բազմաթիվ էջեր: Սակայն, Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից և պատմության դասերի ըմբռնումից հետո ստեղծվեց եվրոպական մեկ մեծ ընտանիք: Եվրոպական պետությունները հաշվի են առել, որ նրանք երկար ժամանակ միասին են ապրել Եվրոպա մայրցամաքում, որ եվրոպական լեզուները ազգակից են, եվրոպական ավանդույթներն ու սովորույթները մեկ հիմքից են սկիզբ առնում, եվրոպական մի երկրում ապրող մարդը կարող է լինել եվրոպական այլ երկրից: Այսպիսով, եվրոպական ինտեգրման հիմնարար հիմքը, իհարկե, եղել է և կա Եվրոպայի ժողովուրդների սոցիալ-մշակութային մերժությունը: Միջնադարյան Եվրոպայից սկսած՝ այս տարածքը մշակութային միասնություն էր, որը միավորված էր քրիստոնեական կրոնով և լատինական գրով: Տարբեր ժողովուրդների համար Եվրոպան միասնական կենտրոն էր, որտեղից եվրոպական արժեքները տարածվում էին ամբողջ աշխարհում: Եվրոպացիները հավասարապես հավատում են արդարությանը, մտքի ազատությանը, փոխադարձ հարգանքին, հանդուրժողականությանը: Եվրոպացիները հավասարապես գնահատում են այն ամենը, ինչը միավորում է այս երկրներին և ժողովուրդներին:

Մինչեվրոպական միավորման գաղափարը կոառնարիրական քաղաքական նպատակ, այս գաղափարը, որպես եվրոպական պետությունների ապագա ճակատագիր, կիսում էին եվրոպացի փիլիսոփաներն ու գրողները: Դեռ 19-րդ դարում ֆրանսիացի հայտնի գրող Վիկտոր Զյուլգոն խոսում էր «Եվրոպայի Միացյալ Նահանգների» մասին՝ հիմնվելով հումանիզմի գաղափարների վրա: XX դարի 20-ականներին ավստրիացի քաղաքական գործիչ, եվրոպական ինտեգրման առաջին գաղափարախոսներից մեկը՝ Ռիչարդ Կալերզը հիմնավորում էր, որ Եվրոպայի

միասնությունը հնարավոր է միայն Գերմանիայի և Ֆրանսիայի սերտ քաղաքական համագործակցության միջոցով: Սակայն, XX դարի առաջին կեսին տեղի ունեցած երկու համաշխարհային պատերազմների պայմաններում այդ գաղափարների գործնական իրականացումը անհնարին դարձավ:

1945 թվականին Երկրորդ համաշխարհային պատերազմի ծանր հետևանքները Եվրոպայի համար՝ միլիոնավոր անօթևանները, պարզապես փախստականները և գործազուրկները, Եվրոպայի տնտեսական հետամնացության գագաթնակետը, դրա քաղաքական մասնատվածության հետ մեկտեղ, ցույց տվեցին աշխարհի հասարակությանը, որ Եվրոպայի քանդված և ենթակառուցվածքային առումով քայքայված տնտեսությունը հնարավոր է վերականգնել միայն պետությունների համագործակցության միջոցով, իսկ դրա շնորհիվ հնարավոր կլիներ խուսափել երկրների միջև առճակատման և նոր պատերազմների վտանգներից: Այն մարդիկ, ովքեր տարիներ շարունակ պայքարում էին ամբողջատիրության դեմ, պատրաստ էին վերջ տալ անսահման ատելությանը և պայմաններ ստեղծել տևական խաղաղության համար: Այս շրջանի ականավոր գործիչների մի ամբողջ համակցություն՝ Ռոբեր Ծումանը, Կոնրադ Ադենաուերը, Ուինսթոն Չերչիլը և այլք, կոչ էր անում Եվրոպայի ժողովուրդներին նոր էջ բացել իրենց կյանքում: Արևմտյան Եվրոպայում պետք է ստեղծվեին ընդհանուր շահերի և համաձայնագրերի վրա հիմնված նոր կառույցներ, որոնք կլինեին եվրոպական բոլոր պետությունների իրավակարգի և հավասարության երաշխավոր: Մեզ համար շատ հետաքրքիր է, որ Միացյալ Եվրոպայի ստեղծմանն աջակցեց Ստրասբուրգում բնակվող վրացի փաստաբան Միշել Մուխոմելին (Միխեիլ Մուխոմելիշվիլի), որը համարում էր, որ միավորումով Եվրոպայի երկրները կհզորանային, և դա չէր խաթարի և թուլացնի անդամ երկրների ինքնիշխանությունը:

Եվրոպական պետությունների միավորման կոչերին հետևեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլի կողմից Միավորված Եվրոպայի գաղափարի հնչեցումը 1946 թվականի

սեպտեմբերի 19-ին, Շվեյցարիայում, Ցյուրիխի համալսարանում ելույթի ժամանակ. «Մենք կրկին պետք է ստեղծենք եվրոպական ընտանիք տարածաշրջանային կառուցվածքով, որը կարող է կոչվել Եվրոպայի Միացյալ Նահանգներ»:

Մեծ Բրիտանիայի գաղափարին աջակցեց Ամերիկայի Միացյալ Նահանգները: 1947 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգները հաստատեց Եվրոպայի քայքայված տնտեսությունը վերականգնելու «Մարշալի ծրագիրը», որը եվրոպական երկրներին համագործակցության կոչ էր անում: Շատ մեծ նշանակություն ուներ Ֆրանսիայի դիրքորոշումը՝ որքանով կցանկանար նա համագործակցել իր նախկին մրցակցի՝ Գերմանիայի հետ: Այնուամենայնիվ, հենց Ֆրանսիայի դիրքորոշումը կարևոր դեր խաղաց Եվրոպական ինտեգրման գործընթացում: Եվրոպական ինտեգրման հաշվարկման կետը համարվում է 1950 թվականի մայիսի 9-ը, երբ ֆրանսիացի քաղաքական գործիչ Ժան Մոնեի կողմից արված առաջարկը պաշտոնապես հիշեցրեց Ֆրանսիայի արտգործնախարար Ռոբերտ Շումանը: Գործը վերաբերում էր Արևմտյան Եվրոպայի ածխի և պողպատի արդյունաբերության միավորմանը: Ժան Մոնեի նախաձեռնության համաձայն՝ պատմական մրցակիցները՝ Ֆրանսիան և Գերմանիան, պետք է միավորվեին եվրոպական այլ երկրների հետ, որպեսզի ածուխն ու պողպատը այլևս ինքնուրույն չմշակվեն: Ժան Մոնեի նախաձեռնության հիմքում ընկած էր այն գաղափարը, որ ցանկացած երկրի՝ պատերազմ վարելու համար անհրաժեշտ է պողպատ, որից զինամթերքն էր պատրաստվում, և քարածուխ՝ գործարաններն ու երկաթուղիները էլեկտրամատակարարելու համար: Հենց այս կարևորագույն ռեսուրսների արտադրության և իրացման ենթակայությունը ընդհանուր անդրազգային մարմնին («գերագույն կառավարություն») կծառայեր գերագույն նպատակին՝ Գերմանիայի և Ֆրանսիայի խաղաղ գոյակցության ապահովմանը և երկու երկրների միջև տնտեսական և քաղաքական հարաբերությունների խորացմանը: Դրան հավատում էին նաև Բելգիան, Իտալիան, Լյուքսեմբուրգը և

Նիդերլանդները, իսկ 1951 թվականին ստեղծվեց «Ածուխի և պողպատի եվրոպական միությունը»: Ստեղծվեց նաև անկախ վերագգային կառավարման մարմին և դրան հավասարակշռող մարմիններ՝ անդամ երկրների Նախարարների խորհուրդը, խորհրդարանի անդամներից բաղկացած խորհրդարանական վեհաժողովը, Արդարադատության դատարանը: Ժամանակի ընթացքում տարբեր ոլորտներում պետությունների միջև համագործակցությունն ու առաջընթացը ապացուցեցին, որ «Ածուխի և պողպատի եվրոպական միության» ստեղծումը ճիշտ արված քայլ էր: 1957 թվականին համագործակցությունը տարածվեց միջուկային էներգիայի ոլորտի վրա՝ ստեղծվեց «Ատոմային էներգիայի եվրոպական միություն»: Բացի այդ, այս երկրները 1957 թվականին ստորագրել են ամբողջ տնտեսական համակարգը մերձեցնելու մասին համաձայնագիր: «Եվրոպական տնտեսական միության» նպատակն էր ստեղծել ընդհանուր եվրոպական շուկա՝ անդամ երկրների հետ առևտրային համագործակցությունը հեշտացնելու համար: Ենթադրվում էր այն դժվարություններից խուսափում, որը կվերաբերեր մի երկրից մյուսը բեռնափոխադրումների ժամանակ առաջացած դժվարություններին՝ սահմանին բեռների կանգնեցում կամ այսպես կոչված մաքսատուրքի վճարում: Ստեղծելով ընդհանուր շուկա՝ չեղարկվում էին սահմանային ստուգումները և վերացվում մաքսատուրքերը: Պետք է վերացվեին բոլոր սահմանափակումները ապրանքների, աշխատուժի, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժի առումով: Ստեղծվեց ազգային կառավարությունների ներկայացուցիչների մարմին՝ Նախարարների խորհուրդ: Ընդլայնվեցին նախկինում ստեղծված խորհրդարանական վեհաժողովը և Արդարադատության դատարանը:

Եվրամիությունը անդամ պետություններին տվել է խաղաղ հարաբերությունների հաստատման հնարավորություն: Դա չի նշանակում, որ կարծիքների տարբերություն չկա, թեպետ, ընդհանուր գաղափարի և բարեկեցության շրջանակներում յուրաքանչյուր պետություն դիմում է երկխոսության և

բանակցությունների ուղիների: Ընդհանուր շուկայի ստեղծումից անմիջապես հետո «Եվրոպական տնտեսական միության» բնակչությունը զգաց կյանքի պայմանների բարելավում: «Եվրոպական տնտեսական միության» երկրները միասին հոգ էին տանում Եվրոպայում տարբեր խնդիրների լուծման մասին՝ օգնելով միավորման մեջ ներգրավված համեմատաբար ցածր զարգացում ունեցող երկրներին: Ստեղծվեցին բոլոր պայմանները Եվրոպայում մարդկանց ազատ տեղաշարժի համար՝ ճանապարհորդության և բնակության նպատակներով: Այս ամենը հանգեցրեց այլ երկրների անդամակցությանը Միությանը: Ժամանակի ընթացքում, 1973 թվականից 2014 թվականները ներառյալ, Եվրամիության անդամ դարձան Մեծ Բրիտանիան, Դանիան և Իռլանդիան (1973), Հունաստանը (1981), Պորտուգալիան և Իսպանիան (1986), Ավստրիան, Ֆինլանդիան և Շվեդիան (1995): Հատկապես հետաքրքիր էր Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի պետությունների ճակատագիրը «սառը պատերազմի» ավարտից հետո, երբ փլուզվեց Բեռլինի պատը և իջեցվեց երկաթե վարագույրը, իսկ կոմունիստական-տոտալիտար անցյալը հաղթահարվեց Եվրամիությանն անդամակցելով: Նման պետությունները կարողացան ամբողջ Եվրոպային ցույց տալ ներկայացուցչական ժողովրդավարության և ազատ, մրցակցային շուկայական տնտեսության զարգացման և մարդու իրավունքները հարգելու ունակություն: Այս ամենը անվերապահ հիմք էր նրանց՝ Եվրամիությանն անդամակցելու համար: 2004 թվականին Միությանը միացան Էստոնիան, Լիտվան, Լատվիան, Լեհաստանը, Սլովակիան, Սլովենիան, Հունգարիան և Չեխիայի Հանրապետությունը, 2007 թվականին՝ Ռումինիան և Բուլղարիան, իսկ 2013 թվականին՝ Խորվաթիան: Սկսվեց նաև Եվրոպական արժեքներին այլ պետությունների մերձեցման գործընթացը: Նրանց համար օրինակելի էր Եվրամիության ներսում խնդիրների լուծման հարցը.

1. Աջակցություն բարդ տարածաշրջաններին, որտեղ չկան բավարար աշխատատեղեր/շրջակա միջավայրի

պայմանները խոչընդոտում են տնտեսության զարգացման գործընթացները/որոշ տեղերում հաղորդակցական միջոցների պակաս զարգացած ենթակառուցվածքների պատճառով բարդացած են առևտրային հարաբերությունները:

2. Աջակցություն աղբատ երկրներին՝ այս ուղղությամբ աշխատանքը կվերաբերի աշխարհի մասշտաբով առկա դիմակայությունների, բնական աղետների, համաճարակների արդյունքում կյանքի ցածր կենսամակարդակ ունեցող պետություններին օգնության ցուցաբերմանը տարբեր ոլորտներում, օրինակ՝ կրթության և բժշկության ոլորտներում: Բացի այդ, Եվրամիության պետությունները ձեռք կբերեն աղբատ երկրներում արտադրված ապրանքներն՝ առանց մաքսատուրքերի:
3. Հոգածություն Նոր աշխատատեղերի ստեղծման մասին. Եվրամիությունը մշտապես ստեղծում է Նոր աշխատատեղեր, աշխատանքային ավելի լավ պայմաններ և օգնում է մարդկանց Նոր բիզնեսներ սկսել: Հետևաբար, գումար է ծախսում անհրաժեշտ որակավորում ունեցող անձնակազմի վերապատրաստման վրա:
4. Անհնար է որևէ երկրի համար առանձին լուծել բնապահպանական խնդիրները: Եվրոպական միությունը ձգտում է լուծել կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրները՝ անդամ պետությունների միջև համաձայնագրերի և նաև այլ երկրների ակտիվ ներգրավվածության միջոցով:
5. Եվրոպայում ընդհանուր խնդիրների լուծմանը նպաստել է անդամ երկրների համար ներմուծված ընդհանուր արժույթը՝ եվրոն: Միասնական արժույթի օգտագործումը հեշտացրել է Եվրամիության տարածքում ճամփորդելը, բիզնեսով զբաղվելը և ապրանքաշրջանառության ծավալը մեծացնելը:

6. Վերջապես, Եվրամիությունում բնակվող անձը իրավունք ունի ապրել, սովորել կամ աշխատել իր նախընտրած անդամ-պետությունում: Առավելագույնս հեշտացել է Եվրամիության մի երկրից մյուսը տեղափոխվելը, ուսանողների ուսուցման գործընթացն ակտիվորեն աջակցվում է Եվրամիության անդամ պետությունների շրջանակներում:

Եվրամիությանն անդամակցելով՝ նոր անդամ-պետությունները կարողացան խորացնել շուկայի միասնությունը: Հետևողականորեն և փուլերով վերացվում են ապրանքների, ծառայությունների, աշխատուժի և կապիտալի ազատ տեղաշարժի բոլոր խոչընդոտները: Ներկայումս պետությունների միջև տեղաշարժը նույնքան ազատ է, որքան հենց երկրների ներսում: Այդ պատճառով Եվրամիության շուկան այժմ անվանվում է ոչ թե ընդհանուր շուկա, այլ ներքին շուկա: Փոխվեց նաև կազմակերպության անվանումը: 1993 թվականից «Եվրոպական տնտեսական միությունը» փոխարինվեց «Եվրամիություն»-ով, քանի որ այն տնտեսական միության հետ միասին նաև քաղաքական միություն է: Երկրները համագործակցում են օրենքի գերակայության պահպանման, անվտանգության և արտաքին հարաբերությունների հարցերում: Աստիճանաբար կատարելագործվեցին Միության կառուցվածքը, որոշումների կայացման կանոններն ու ընթացակարգերը: Մեծացել են Եվրախորհրդարանի դերն ու լիազորությունները: Խորհրդատվական մարմնից այն վերափոխվել է օրենսդիր մարմնի՝ հաստատում է Եվրամիության բյուջեն և վերահսկում է Եվրահանձնաժողովի գործունեությունը: Փոխվել են Եվրախորհրդարանը համալրելու կանոնները: Եթե սկզբում դրանում գումարվում էին ազգային խորհրդարանների ներկայացուցիչներ, ապա այս անգամ նրանք ուղղակիորեն ընտրվում են Եվրոպական պետությունների քաղաքացիների կողմից: Բայց ակնառու առավելություններով հանդերձ, կան նաև որոշակի հիմնախնդիրներ: 2015 թվականին աշխարհում

զարգացած իրադարձությունները, Սիրիայում պատերազմի տեսքով, մեծացրին փախստականների հոսքը դեպի Եվրոպա, որի հետևանքը Եվրամիությունից Մեծ Բրիտանիայի դուրս գալու մասին որոշումն էր: Չնայած Եվրամիությունից անդամ պետության հեռանալու առաջին նախադեպին՝ Եվրոպական պետությունների սերտ համագործակցությունն այլընտրանք չունի, քանի որ միայն համագոյակցությունն ու կոոպերացիան են պայմանավորում նրանում խաղաղություն, անվտանգություն, տնտեսական զարգացում և նրա քաղաքացիների բարեկեցություն:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Եվրամիության մասին պայմանագրի 49-րդ հոդվածը սահմանում է, որ Եվրոպական միությանն անդամակցելու հայտեր կարող են ներկայացնել այն Եվրոպական պետությունները, որոնք հարգում և աջակցում են ժողովրդավարությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև օրենքի գերակայությունը, փոքրամասնությունների իրավունքները:

Բացի այդ, երկիրը պետք է ունենա գործող շուկայական տնտեսություն և մրցունակ լինի Եվրոպական ներքին շուկայում:

1993 թվականին Եվրոպական խորհուրդը Կոպենհագենի գագաթնաժողովին ճանաչեց Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների՝ Եվրամիությանը միանալու իրավունքը, եթե նրանք բավարարեն հետևյալ երեք չափանիշները.

Քաղաքական. Երկրներն ունեն կայուն ինստիտուտներ: Նրանք պատասխանատու են ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների ու փոքրամասնությունների նկատմամբ հարգանքի համար:

Որպեսզի Եվրամիությանը անդամակցել ցանկացող երկիրը սկսի երկխոսություն անդամակցության վերաբերյալ, անպայման պետք է բավարարի առաջին չափանիշը:

Տնտեսական. Երկրներում զարգացնում են շուկայական էկոնոմիկան և կարող են հաղթահարել շուկայական էկոնոմիկային բնորոշ մրցակցային միջավայրը և այլ մարտահրավերներ:

Իրավական. Երկրների համար ընդունելի են Եվրամիությունում սահմանված օրենքներն ու իրավական փորձը:

Վերոնշյալ չափանիշների հետ մեկտեղ, պետք է ընդգծել **աշխարհագրական** չափանիշը, քանի որ 1992 թվականի Մաաստրիխտի պայմանագրի համաձայն՝ ցանկացած եվրոպական երկիր կարող է հայտարարել Եվրամիություն մտնելու իր ցանկության մասին, եթե հարգում է Եվրամիության ժողովրդավարական արժեքները և պատրաստ է դրանց հանրամատչելիացման ու իրականացման համար: Միևնույն ժամանակ, չինչվում որևէ հստակեցում կապված ոչ եվրոպական երկրների մեծեցման-ընդունման վերաբերյալ:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այն պետությունների թվում, որոնք անցյալ դարի 90-ականներից՝ հորհրդային Միության փլուզումից և անկախություն հռչակելուց հետո, հստակ արտահայտել են իրենց արևմտամետ քաղաքական հետագա զարգացման ընթացքը, նաև Վրաստանն է:

Ի սկզբանե պետք է նշել, որ Եվրամիությունն աջակցում է Վրաստանի նկրտումը՝ Եվրամիության հետ սերտ հարաբերությունների և համագործակցության ուղղությամբ: Եվրամիությունը և Վրաստանի կառավարությունը համաձայնել են շարունակել համատեղ աշխատանքը Վրաստանի քաղաքական ասոցացման էլ ավելի խորացման և Եվրամիության հետ

տնտեսական ինտեգրման ուղղությամբ: Եվրամիությունն աջակցում է Վրաստանի տարածքային ամբողջականությանը, օգնում վրացական պետության տնտեսական զարգացմանն ու արդիականացմանը: Եվրամիությունն այն կազմակերպությունն է, որն ապահովում է Վրաստանի անվտանգությունն ու ժողովրդավարական ու տնտեսական զարգացումը: Եվրամիությանն անդամակցելը հնարավորություն է, որը բերում է անվտանգության ապահովում, տարածքային ամբողջականության ամրապնդում և կյանքի չափորոշիչների բարձրացում:

Հետաքրքիր Եվրաստան-Եվրամիություն հարաբերությունների համառոտ ժամանակագրությունը.

- Եվրամիության հետ մեր երկրի հարաբերությունները սկսվում են 1992 թվականից: Այս ժամանակվանից ի վեր Նորանկախ երկրների՝ շուկայական Էկոնոմիկային անցման և ժողովրդավարության ամրապնդման գործընթացն աջակցվում էր Եվրամիության տեխնիկական աջակցության ծրագրով՝ TACIS-ով: Եվրամիության տնտեսական աջակցության երեք հիմնական ուղղություններ կային՝ ֆինանսական օգնություն, մարդասիրական օգնություն (պարենային օգնության տեսքով) և տեխնիկական աջակցություն:¹
- 1996 թվականի ապրիլի 22-ին Լյուքսեմբուրգում ստորագրվեց Եվրամիության և Վրաստանի միջև առաջին միջազգային համաձայնագիրը՝ «Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը» (PCA), որը Վրաստան-Եվրամիություն հարաբերությունների իրավական հիմքն է: Տվյալ Համաձայնագիրը Նախատեսում էր քաղաքական երկխոսություն Վրաստանի և Եվրամիության միջև, աջակցություն Վրաստանում

1 Եվրամիություն-Վրաստան հետագա հարաբերությունների գործընթացում TACIS-ին 2007 թվականին փոխարինեց Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքը (ENPI), իսկ վերջինս 2014 թվականին փոխարինվեց Եվրոպական հարևանության գործիքով (ENI):

ժողովրդավարության և շուկայական էկոնոմիկայի, կողմերի միջև առևտրի և ներդրումների, կանոնակարգային, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, գիտական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության զարգացմանը:

- Վրաստանի և Եվրամիության միջև եղած բազմաթիվ ժամանակագրական հանգրվաններից հատկանշական են՝ Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ENP) և Արևելյան գործընկերության նախաձեռնությունը (ENP), որոնք սկիզբ են դրել մի շարք ձեռքբերումների Վրաստան-Եվրամիություն հարաբերությունների հարցում:
- 2004 թվականին Վրաստանը դարձավ Եվրոպական հարևանության քաղաքականության շահառու:
- 2008 թվականի Ռուսաստան-Վրաստան պատերազմի ընթացքում Եվրամիության և Ամերիկայի Միացյալ Նահանգների օգնությամբ և միջամտությամբ հնարավոր դարձավ դադարեցնել պատերազմական գործողությունները և օկուպացիայի աշխարհագրության ընդլայնումը:
- 2009 թվականին Վրաստանը դարձավ Եվրամիության Արևելյան գործընկերության նախաձեռնության մասնակից (Ադրբեյջանի, Բելառուսի, Մոլդովայի, Չայաստանի և Ուկրաինայի հետ միասին):
- 2014 թվականին ստորագրվել է **Ասոցացման համաձայնագիրը (AA)**: Այս ժամանակվանից Վրաստանի և Եվրամիության միջև հաստատվում է **քաղաքական ասոցացում** և սկսվում են գործողություններ **խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի ստեղծելու (DCFTA)** ուղղությամբ:
- 2017 թվականին Եվրամիությունը Վրաստանի քաղաքացիներին հնարավորություն տվեց առանց վիզայի մուտք գործել և ազատ տեղաշարժվել Շենգենյան գոտում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ENP)

2003 թվականից Եվրամիության հանգուցային և գերակա խնդիր է հանդիսանում Եվրամիության գործընկերության պետական և սոցիալական կայունության ամրապնդումը: Եվրամիությունը ստեղծել է զարգացման ու բարիդրացիության գոտի, այսպես կոչված «Բարեկամների գոտի»: Խոսքը Միջերկրական ծովի հարավային ափերի երկրների, Ռուսաստանի և նորանկախ պետությունների հետ Եվրամիության հարաբերությունների հետագա զարգացման համար շրջանակ մշակելու մասին է: Միևնույն ժամանակ, Եվրամիությունը նախատեսում է «Հարևանության նախաձեռնության» մասնակից երկրների՝ Եվրամիության հետ հարաբերությունների տարբեր մակարդակներ և իր նոր հարևանության քաղաքականությունը հիշատակված երկրների նկատմամբ իրականացնում է տարբերակված մոտեցման հիման վրա: Եվրոպական միության հարևանության քաղաքականությունը հարևան երկրների նկատմամբ արտաքին քաղաքականությունն է, որը մշակվել է 2004 թվականին՝ Եվրամիության ընդլայնման, ընդլայնված Եվրոպայի և նոր հարևանների միջև նոր բաժանարար գծերից խուսափելու և կայունության, անվտանգության և բարեկեցության ապահովման համար: Եվրոպական հարևանության քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկը հարևան երկրներին օգնելն է ներքին բարեփոխումների իրականացման հարցում՝ հավասար համագործակցության նպատակով:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը տարբերվում է Եվրամիությանը հնարավոր անդամակցության խնդրից: Եվրոպական հարևանության քաղաքականությունը ընդլայնման այլընտրանք է և արտոնյալ հարաբերություններ է հաստատում Եվրամիության հարևան երկրների հետ: Համագործակցությունը հիմնվում է հետևյալ ոլորտներում ընդհանուր արժեքների համար փոխադարձ պարտավորությունների ստանձնման վրա. Օրենքի գերակայություն, լավ կառավարում, փոքրամասնությունների իրավունքներ, բարիդրացիական հարաբերություններ, շուկայական էկոնոմիկայի սկզբունքներ և կայուն զարգացում:

Եվրամիությունն օգնություն է տրամադրում հարևանության տարածաշրջանի գործընկերներին, հիմնականում Եվրոպական հարևանության գործիքի (ENI) միջոցով, որը նախատեսում է 15 միլիարդ Եվրոյի միջոցառումներ, որը նախատեսված է 2014-2020 թվականների համար:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը Հարավային Կովկասի երկրների, այդ թվում Վրաստանի վրա, տարածվել է 2004 թվականից ի վեր՝ 2003 թվականի նոյեմբերին կայացած Վարդերի հեղափոխությունից հետո: Մեր երկրում Եվրոպական հարևանության քաղաքականության տարածումից հետո Վրաստանի և Եվրամիության հարաբերությունները որակապես նոր հեռանկար են ձեռք բերել: Եվրամիությունը մեզ առաջարկել է արտոնյալ հարաբերություններ, այն դուրս է եկել պարզ համագործակցության շրջանակից և վերաճել սերտ տնտեսական և քաղաքական ինտեգրման:

Հարևանության քաղաքականության շրջանակներում 2007 թվականից գործում է Եվրոպական հարևանության քաղաքականության գործիքը (ENPI)՝ ֆինանսական գործիք, որը ենթադրում էր հարևանության քաղաքականության աջակցություն՝ ֆինանսական գործունեությունների միջոցով: 2007 թվականին Եվրոպական քաղաքականության գործիքի շրջանակներում Վրաստանին 24 միլիոն Եվրո է տրամադրվել Գործողությունների ծրագրի գերակա ուղղությունները բարեփոխելու համար: 2008 թվականի օգոստոսյան պատերազմից հետո Եվրոպական հանձնաժողովը Եվրոպական հարևանության քաղաքականության գործիքի հակամարտությունների հետ կապված փաթեթից լրացուցիչ 500 միլիոն Եվրո է հատկացրել Վրաստանին, որի հիմնական մասը ծախսվել է տեղահանվածների աջակցության վրա: 2011 թվականից գործարկված Նոր Եվրոպական հարևանության գործիքը (ENI - European Neighborhood Instrument) Եվրամիության սահմաններից արևելք և հարավ գտնվող 16 գործընկեր երկրներին 2014-2020 թվականներին օգնություն է տրամադրում: Այս գործիքը Վրաստանում գործարկվել է 2015 թվականից:

Գործընկեր երկրներին խրախուսելու նպատակով Եվրոպական

հարևանության գործիքը հիմնվում է տարբերակման մեթոդի վրա և օգտագործում է «ավելին՝ ավելի դիմաց» սկզբունքը. Հատուկ ուշադրություն է դարձվում այն երկրներին, որոնք իրականում կառուցում են ուժեղ և կայուն ժողովրդավարություն՝ հիմնված օրենքի գերակայության վրա: Եվրոպական հարևանության քաղաքականությունը նույնիսկ արտացոլում էր երկրի հավակնությունների մակարդակը Եվրամիության հետ գործընկերության առումով, նրա առաջընթացը ժողովրդավարության կառուցման և բարեփոխումների իրականացման հարցում համաձայնեցված նպատակների կատարման մեջ:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (EaP)

«Արևելյան գործընկերության» (Eastern Partnership - EaP) նախաձեռնությունը՝ որպես Եվրամիության արևելյան հարևան երկրների (Ադրբեջան, Բելառուս, Մոլդովա, Վրաստան, Հայաստան, Ուկրաինա) հետ համագործակցության նոր ձևաչափ, ուժի մեջ է մտել 2009 թվականից:

«Արևելյան գործընկերությունը» Եվրամիությանն անդամակցելու հեռանկարին այլընտրանք չէ: Այն երկկողմ և բազմակողմ համագործակցության միջոցով նպաստել է գործընկեր երկրների, այդ թվում՝ Վրաստանի, Եվրամիությանն ինտեգրման գործընթացի խորացմանը, ընդհանուր արժեքների տարածմանը, տարածաշրջանում անվտանգության հզորացմանը և տնտեսական զարգացմանը: Նախաձեռնության գլխավոր նպատակն է նպաստել եվրոպական հարևանության քաղաքականության (ENP) իրականացմանը, բայց «Արևելյան գործընկերության ծրագիրն» ավելի հեռուն է գնացել և գործընկեր երկրներին առաջարկել է կոնկրետ հեռանկարներ՝ Եվրամիությանը ավելի մերձենալու նպատակով:

Արևելյան գործընկերությունը երկրներին առաջարկել է հնարավորությունների առավելագույն կիրառում գործընկեր երկրներում առկա քաղաքական և տնտեսական իրավիճակի,

ինչպես նաև բարեփոխումների տեմպերի ու արդյունքների նախատեսմամբ:

«Արևելյան գործընկերության» շրջանակներում համագործակցությունը զարգացել է երկկողմ և բազմակողմ համագործակցության ձևաչափերով: Նման հարաբերությունը նպատակ էր նախանշում համատեղ նախագծերի իրականացման միջոցով հասնել տարածաշրջանում դրված նպատակներին: Երկկողմ համագործակցությունը Եվրամիության և գործընկեր յուրաքանչյուր երկրի միջև նախատեսում էր համագործակցության հետագա խորացում, ինչը ներառում էր. նոր, ավելի լայն կապերի ձևավորում գործընկերության և համագործակցության (PCA) համեմատ համեմատաբար խորացված համաձայնագրերի՝ Ասոցացման համաձայնագրերի (Association Agreements) ձևակերպման միջոցով, ինչը պատասխանում էր յուրաքանչյուր գործընկեր երկրի Եվրամիությանը մերձենալու ձգտմանը: Նման համաձայնագրեր են կնքվել այն երկրների հետ (Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա), որոնք պատրաստ են ստանձնել համապատասխան մակարդակի պարտավորություններ: Եվրամիության և գործընկեր երկրների միջև ստեղծել ազատ առևտրի գոտիներ, ինչը հիմնվեց յուրաքանչյուր երկրի հետ կնքված խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիների համաձայնագրերի վրա (Deep and Comprehensive Free Trade Areas), որպես Ասոցացման համաձայնագրի անբաժանելի մասի: Նպաստել քաղաքացիների տեղաշարժին անվտանգ միջավայրում: Այդ նպատակով Եվրամիությունը գործընկեր երկրների, այդ թվում՝ Վրաստանի հետ վիզաների ռեժիմի դյուրացման և հետընդունման պայմանագրեր (Visa Facilitation and Readmission Agreements) է ստորագրել: Ձեռնարկվել են հետևողական քայլեր՝ առանց վիզայի ռեժիմի ներդրման ուղղությամբ:

Եվրոպական հանձնաժողովը միլիոնավոր եվրոներ է հատկացրել «Արևելյան գործընկերության» իրականացման նպատակով, որպես Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի (ENPI) մաս: Կոնկրետ համագործակցության հարցերը տեղակայվեցին չորս հարթակներում.

I հարթակ. Ժողովրդավարություն, լավ կառավարում և կայունություն,

II հարթակ. Տնտեսական ինտեգրում և Եվրամիության քաղաքականության հետ համապատասխանության ապահովում,

III հարթակ. Էներգետիկ անվտանգություն,

IV հարթակ. Շփումներ ժողովուրդների միջև:

Վրաստանը հաջողությամբ հաղթահարեց Արևելյան գործընկերության շրջանակներում նախանշված նպատակները, ինչը հետագայում լայնորեն արտացոլվեց Ասոցացման համաձայնագրի և Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու մասին համաձայնագրի գործնական իրականացման մեջ: Դա է վկայում Վրաստանում 2018 թվականին Ազգային ժողովրդավարական ինստիտուտի NDI-ի հետազոտության համաձայն, Վրաստանում հարցված բնակչության վերաբերմունքը Եվրամիության նկատմամբ: 83%-ը համարում է, որ Վրաստանի անդամակցությունը Եվրամիությանը ընդունելի է, քանի որ Եվրոպական քաղաքականությունը տալիս է հասարակության կարիքներին հարմարեցված քաղաքականության և կառավարման ձևավորման հնարավորություն:

Օգտագործված աղբյուրներ.

www.europe.eu

www.europe-today.eu

www.op.europa.eu

www.eesc.europa.eu

www.consilium.europa.eu/media/44400/685-annex-5-d-georgia-factsheet

https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/policy/conditions-membership_en

<https://europarl.europa.eu/>

<http://old.infocenter.gov.ge/>

<https://netgazeti.ge/news/267661/>

<http://www.epfound.ge/wp-content/uploads/2019/09/EU-2019-Final-GE.pdf>

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՇՏՈՆԱԴԵՍ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ**

Եվրամիությունը ճանաչում է Վրաստանի անկախությունն ու տարածքային ամբողջականությունը: Վրաստանի համար Եվրամիությունը ռազմավարական գործընկեր է: Վրաստանը ներգրավված է Եվրոպական Միության օժանդակության ծրագրերում: Եվրամիությունն ամեն տարի Վրաստանին օգնում է առնվազն 100 միլիոն եվրոյով: Միևնույն ժամանակ, Եվրամիության աջակցությունը չի սահմանափակվում միայն ֆինանսական աջակցությամբ, այլ նաև՝ քաղաքական, տեխնիկական, մարդասիրական և այլն:

1. Վրաստանի Սահմանադրության 78-րդ հոդվածում նշված է.

«Սահմանադրական մարմինները պետք է իրենց լիազորությունների սահմաններում ձեռնարկեն բոլոր միջոցները՝ ապահովելու Վրաստանի լիարժեք ինտեգրումը Եվրամիությանը և Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությանը»:

2. Վրաստանի 2019-2022 թվականների արտաքին քաղաքականության ռազմավարությունը.

«2019-2022 թվականների Վրաստանի արտաքին քաղաքականության ռազմավարությունը սահմանում է երկրի արտաքին քաղաքականության ռազմավարական նպատակները, ինդիկներն ու գերակա ուղղությունները, դրանց իրականացման ուղիներն ու մեխանիզմները: Սա Վրաստանի արտաքին քաղաքականության առաջին ռազմավարությունն է, որը Վրաստանի կառավարության կողմից հաստատված ազգային մակարդակի փաստաթուղթ է»:

«Նպատակ 2. Եվրամիությանն անդամակցում»

«Վրաստանի ազգային շահերը.

1. Ինքնիշխանության և տարածքային ամբողջականության ապահովում
2. Պետական ինստիտուտների զարգացում և ժողովրդավարության ամրապնդում
3. Ազգային անվտանգության արդյունավետ համակարգի զարգացում
4. Ազգային միասնության ու քաղաքացիական համաձայնության ամրապնդում

5. Եվրոպական և Եվրատվանտյան ինտեգրում

6. Էկոնոմիկայի կայուն երկարաժամկետ աճի ապահովում
7. Էներգետիկ անվտանգության ապահովում
8. Տարածաշրջանային կայունության ապահովում
9. Վրաստանի տարանցիկ գործառույթի հզորացում
10. Վրաստանի և տարածաշրջանի Էկոլոգիական անվտանգության ապահովում
11. Քաղաքացիական ինտեգրում և ազգային և մշակութային ինքնօրինակության ապահովում
12. Կիբերանվտանգության ամրապնդում
13. Ժողովրդագրական անվտանգության ապահովում
14. Սփյուռքի հետ հարաբերություններ»:

«Վրաստանի անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունները.

1. Վրաստանի գրավյալ տարածքների ապասկուսացում և Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերություններ
2. Պետական ինստիտուտների զարգացում և ժողովրդավարության ամրապնդում

3. Ներգրավվածության քաղաքականության իրականացում
 4. Վրաստանի պաշտպանական և անվտանգության համակարգի զարգացում
 5. **Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությանն անդամակցում և Եվրամիությանն ինտեգրում»**
- ... (և այլն):

3. «Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հաղորդակցության մասին Վրաստանի կառավարության 2017-2020 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» Վրաստանի կառավարության # 765 հրամանագիր

Հիմնական ուղերձներ

Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հետ կապված հարցերի վերաբերյալ համապատասխան ուղերձների մշակումը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում իրականացվում է՝ հասարակական կարծիքի հարցումների արդյունքների, թիրախային խմբերի վերլուծության, հիմնական ոչ ճիշտ ընկալումների և հասարակության մեջ առկա տեղեկատվության պակասի, ինչպես նաև գործողությունների ծրագրի հաշվետվության վերլուծման հիման վրա:

Ռազմավարական հաղորդակցությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղերձների հիման վրա.

Ազգային մակարդակում.

- Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին անդամակցության գործընթացում ընթացիկ, իրականացվող և ծրագրված համալիր և լայնամասշտաբ բարեփոխումները ամրապնդում են Վրաստանի պետականությունը և պաշտպանունակությունը:
- Եվրամիությանը և ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության գործընթացը նպաստում է երկրի արագ զարգացման

համար անհրաժեշտ անվտանգ և մրցակցային միջավայրի ստեղծմանը:

- Եվրամիությանը և ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության գործընթացն ապահովում է Վրաստանում ժողովրդավարական ինստիտուտների զարգացում, օրենքի գերակայության, մարդու իրավունքների, ընդհանուր արժեքների և մշակութային բազմազանության պաշտպանություն, քաղաքացիների ազատ տեղաշարժ:
- Եվրամիությանը և ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության գործընթացը նպաստում է օտարերկրյա ներդրումների ավելացմանը, գործազրկության նվազեցմանը և Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու կենսամակարդակի բարելավմանը:

Միջազգային մակարդակում.

- Վրաստանը, որպես եվրոպական մշակույթ և արժեքներ կրող հնագույն քրիստոնեական և երիտասարդ ժողովրդավարության երկրներից մեկը, նշանակալի ներդրում է անում եվրոպական և եվրատլանտյան անվտանգության ամրապնդման գործում:
- Վրաստանը հանդիսանում է ժողովրդավարական զարգացման հաջող օրինակ Եվրամիության և ՆԱՏՕ-ի Արևելյան հարևանության մեջ:
- Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին անդամակցությունը կնպաստի Վրաստանում ժողովրդավարության արագ համախմբմանը և տարածաշրջանում դեպի ժողովրդավարական գործընթացներ նկրտմանը:
- Վրաստանը հուսալի գործընկեր է, որը հանդիսանում է կարևոր տարանցիկ միջանցք, ինչն, այդ թվում, նպաստում է Եվրոպայի Էներգետիկ անվտանգությանը:

4. Վրաստանի կառավարության 2017 թվականի «Վրաստանի կրթության և գիտության 2017 - 2021 թվականների միասնական ռազմավարության» հաստատման մասին №533 որոշման մեջ ասվում է.

Ռազմավարությունը միտված է կրթության ոլորտում եվրամիության համապատասխան քաղաքականության և գործելակերպի հետ մերձեցմանը, ինչը կապված է կրթության որակի ապահովման մեխանիզմների իրականացման ժամանակ Բոլոնիայի գործընթացի շրջանակներում մշակված հանձնարարականների, այդ թվում Բարձրագույն կրթության եվրոպական չափորոշիչների և ուղեցույց սկզբունքների (ESG) պահանջների նախատեսման հետ ... Ռազմավարության փաստաթուղթը նախատեսում է նաև վրացական մասնագիտական կրթության համակարգում մասնագիտական կրթության և վերապատրաստման եվրոպական կրեդիտային համակարգի (ECVET) աստիճանական ներդրում:

2014 թվականի հունիսի 27-ին ստորագրված Վրաստանի և Եվրամիության միջև Անցացման համաձայնագրի առանձին գլուխներով սահմանվեցին գիտության և կրթության ոլորտում Եվրամիության հետ Վրաստանի համագործակցությունը: Մասնավորապես, Համաձայնագրի 12-րդ գլուխը նախատեսում է համագործակցություն հետազոտությունների, տեխնոլոգիաների զարգացման և ցուցադրման բնագավառներում, իսկ 16-րդ գլխում տրված են կրթության, վերապատրաստման և երիտասարդության ուղղությամբ համագործակցության թեմաներ: Ինչպես նաև, Վրաստանի կրթական և գիտական ոլորտի համար կարևոր ռեսուրս է հանդիսանում Եվրամիության «Հորիզոն 2020» հետազոտական և նորարարական ծրագրի 77 միլիարդանոց հիմնադրամը, որի անդամ Վրաստանը դարձավ 2016 թվականին, և որի շրջանակներում մրցույթի կարգով արդեն ֆինանսավորվել է վրացական կազմակերպությունների կողմից ներկայացված 17 նախագիծ, 5.2 մլն լարիից ավելի ընդհանուր արժեքով: Միևնույն

Ժամանակ, երկրին վերադարձվում է վճարված անդամավճարի կեսը՝ գիտության հետագա զարգացման նպատակով:

Վրաստանն ակտիվորեն ներգրավված է եվրամիության ERASMUS + ծրագրում և հաջող ծրագրերի առումով 131 գործընկեր երկրների շարքում զբաղեցնում է 8-րդ տեղը: Արդյունքում, 2015 թվականից ի վեր ավելի քան 1500-ից ավելի Վրաստանի քաղաքացիություն ունեցող ուսանողներ ֆինանսավորվել են եվրոպական առաջատար համալսարաններում սովորելու համար: 2016 թվականին Վրաստանը ERASMUS+ շարժունակության ծրագրերում շահել է 1465 կրթաթոշակ: Կրեդիտների շարժունակության ծրագրի միջոցով ձեռք է բերվել 1333 կրթաթոշակ: ՀիՒԱ Կրթության միջազգային կենտրոնի կողմից ֆինանսավորվել է Վրաստանի 483 քաղաքացիների կրթություն աշխարհի առաջատար համալսարաններում:

ՎՐԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՐԱԾՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Անցած 30 տարիների ընթացքում՝ անկախության համար պայքարի և անկախության հռչակման օրերից, Վրաստանը տարել է մի քանի պատերազմներ, զինված հակամարտություն, քաղաքական և տնտեսական հետապնդումներ: Արդյունքում, Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունը և Տիսինվալիի տարածաշրջանը/Հարավային Օսիան բռնազավթված են Ռուսաստանի Դաշնության կողմից: Վրաստանի տնտեսությունը ժամանակ առ ժամանակ զգալի բացասական ազդեցության է ենթարկվում: Չենքերով, խաղաղ բնակիչների սպանություններով, հողազավթմամբ, արյունահեղությամբ, ուժի ցուցադրմամբ թշնամին անընդհատ թուլացնում է Վրաստանի ինքնիշխանությունը, ոտնձգություն է անում նրա

տարածքային ամբողջականության նկատմամբ, խոչընդոտում է ժողովրդավարական գործընթացները, բարեկեցության աճը, զարգացումը, անկախությունը, ազատությունը: Ռուսաստանի Դաշնության կողմից մեր ինքնիշխան գոյությանը միջամտելու հետևանքները ցավոտ են. գործագրություն, աղբատություն և այլն: Քանի որ Վրաստանը ցանկանում է լինել անկախ, միավորված, քաղաքակիրթ, աշխարհի ժողովուրդների և ցանկացած պետության համար բաց, նրա դեմ պայքարում է իր հարևանը:

Միջազգային փաստաթղթերով ճանաչված են Աբխազիայում վրացիների էթնիկական գտումները:

Նման իրավիճակում, առանց գործընկերների և քաղաքական ընկերների, Վրաստանի համար դժվար կլինի գոյատևել և շարունակել արժանապատիվ պետական կյանքը: Անկախության հռչակման առաջին օրվանից փոքր Վրաստանի կողքին կանգնեցին այնպիսի մեծ համաշխարհային խաղացողներ, ինչպիսիք են Եվրամիությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները (ԱՄՆ) և այլ ժողովրդավարական աշխարհներ: Նրանց կողմից օգնությունը ներառում է քաղաքական, ֆինանսական, տեխնիկական, մարդասիրական օգնություն:

Մարդկանց, կազմակերպությունների, պետությունների միջև ցանկացած հարաբերություն և համաձայնություն հիմնվում է ընդհանուր շահերի առկայության, փոխադարձ հարգանքի, փոխշահավետության, փոխադարձ աջակցության վրա: Այսպիսով, Եվրամիության և Վրաստանի միջև գործընկերային հարաբերությունները, այդ թվում Առցացման համաձայնագրի կնքումը, պայմանավորված են փոխշահավետ նպատակների իրագործմամբ: Մի կողմից, Եվրամիությունը ցանկանում է խաղաղություն, կայունություն, անվտանգություն իր հարևանության տարածքում, միևնույն ժամանակ՝ առևտրատնտեսական և քաղաքական կապերի ընդլայնում: Մյուս կողմից, Վրաստանը ցանկանում է ամրապնդել պետականությունը հետխորհրդային շրջանում, անկախության ու ինքնիշխանության լրիվ և արդյունավետորեն ապահովում,

պատերազմի հետևանքների չեզոքացում, հզոր հանրային և մասնավոր հատվածի ծնավորում, բիզնեսի, արտադրության ու առևտրի ընդլայնում, սոցիալական կայունության ապահովում, կրթության որակի բարձրացում, մարդու բարեկեցության և զարգացման համար լավ պայմանների ստեղծում: Վերոնշյալ նպատակներին հասնելու համար Վրաստանն ու Եվրամիությունն օգնում են միմյանց: Իհարկե, օգնության չափը, տեսակները և հնարավորությունները տարբեր են: Մասնավորապես, Վրաստանը հատկապես կարիք ունի լուրջ ֆինանսական և տեխնիկական միջոցներով աջակցության՝ նոր տիպի ժողովրդավարական և քաղաքակիրթ պետություն կառուցելու, ենթակառուցվածքներ զարգացնելու (տրանսպորտային, ճանապարհային, ջրի, կոյուղու, դպրոցների և այլն), ստեղծելու նոր տեխնոլոգիաներ և նորարարություններ արտադրության ոլորտում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ավելի քան 24 տարի Եվրամիությունը շարունակաբար, ամեն տարի, օգնում է Վրաստանին, և այդ օգնությունը հսկայական է: Եվրամիության օգնությամբ, աջակցությամբ, ֆինանսավորմամբ կամ համամասնակցությամբ Վրաստանի համար սկսվել են տարբեր շահավետ նախագծեր՝

- Դպրոցների կառուցում և վերանորոգում.
- ճանապարհների անցկացում.
- Տրանսպորտի ոլորտի բարելավում, այդ թվում բարեկարգ հասարակական տրանսպորտի թվի ավելացում.
- Կրթության որակի բարելավում և Վրաստանի քաղաքացիների համար նոր հնարավորությունների ապահովում, այդ թվում՝ անվճար կրթություն արտերկրում, կրթաթոշակներ և այլն:

- Ազգային փոքրամասնությունների, տեղահանվածների և (կամ) փախստականների աջակցության միջոցառումներ, «խտրականության դեմ պայքարի մասին» Վրաստանի օրենքի ընդունում և խտրականության դեմ պայքարի մեխանիզմների ստեղծում.
- Տարբեր բիզնեսների ֆինանսավորում և հզորացում, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտում.
- Հանրային ծառայությունների զարգացում (մեկ պատուհանի սկզբունքով ծառայություններ, հանրային առողջապահություն, ճգնաժամերի կառավարում և այլն).
- Գիտության ոլորտի հզորացում.
- Աշխատանքի տեսչության մեխանիզմի ձևավորում և աշխատողների անվտանգության հզորացում.
- Վրաստանի ներգրավում և ինտեգրում համաշխարհային և տարածաշրջանային մասշտաբի ծրագրերում, ներառյալ գազի և նավթի երթուղիների դիվերսիֆիկացման նախագծերում (Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա սերտ գործընկերությամբ).
- Աշխատատեղերի ստեղծման խթանում.
- Վրաստանի մշակութային ժառանգության պահպանում և խնամք.
- Դատախազների, դատավորների, այլ մասնագիտությունների անձանց վերապատրաստում-թրեյնինգավորում.
- Արտասահմանում գտնվող անձանց կամավոր Վրաստան վերադարձի աջակցություն.
- Այլ բազմաթիվ:

Նման օգնության հիման վրա Վրաստանը հաջողեցրեց և կարողացավ կառուցել բոլորովին նոր պետություն: Այն դարձավ երիտասարդ, ժողովրդավարության երկիր, հաղթահարեց

պատերազմները, զարգացրեց գեոսաշրջությունը, ողջ աշխարհին ծանոթացրեց Վրաստանի մշակույթը, բնական գեղեցկությունը և հարստությունը, պատմական վեհությունը, արտադրեց ապրանքներ և արտահանեց աշխարհի տարբեր շուկաներ: Չնայած բազմաթիվ պատերազմներին՝ Վրաստանը կարողացավ ոտքի կանգնել համարձակորեն, համառորեն, նվիրվածությամբ. ո՛չ իր ընտրությանը դավաճանեց և նաև մինչև վերջ հավատարիմ մնաց գործընկեր երկրների աջակցությանը:

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ժամանակակից տեխնոլոգիաների և նորարարությունների դարաշրջանում ի հայտ է եկել պատերազմի նոր ձև՝ տեղեկատվական պատերազմ, հիբրիդային պատերազմ: Վրաստանում սկսվեց կեղծ տեղեկատվություն տարածվել Եվրամիության մասին: Թշնամին, զենքով որ չկարողացավ, որոշեց Վրաստանի և Եվրամիության միջև հարաբերությունները խափանել կեղծ լուրերով. սկսեց համոզել Վրաստանի քաղաքացիներին նրանում, որ Եվրամիությունը խլում է մեր լեզուն, մշակույթը, սովորույթները, ավանդույթները և այլն: Վրաստանի կառավարությունը այստեղ ևս անհապաղ գործողություններ է ձեռնարկել՝ իմաստությամբ և հումանիզմով սկսելով ռազմավարական հաղորդակցման գործընթացներ՝ նոր մարտահրավերի դեմ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՅԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Եվրամիությունը 27 եվրոպական պետությունների միություն է, որտեղ որոշումներն ընդունվում են համատեղ: Ընդունված որոշումները բխում են յուրաքանչյուր երկրի շահերից և ձեռնտու

են բոլորին: Եվրամիության յուրաքանչյուր անդամ պետություն ունի իր պետական լեզուն, պատմությունը, մշակույթը, կյանքի ձևը, սահմանադրությունը, սովորույթները, ավանդույթները, ադաթները: Պահպանվում են նրանց անկախությունն ու անհատականությունը:

Եվրոպական 27 երկրները Էապես տարբերվում են միմյանցից: Նախկինում նրանք պատերազմում էին միմյանց դեմ և նույնիսկ թշնամացել են իրար, բայց նրանք կառուցողական գիշումների և փոխշահավետ համատեղ գործողությունների միջոցով կարողացել են կառուցել խաղաղության, բարեկեցության, արդարադատության և անվտանգության տարածք, որտեղ ցանկացած մարդ իրեն պաշտպանված է զգում:

Եվրամիության անդամ երկրները միմյանց են հզորացրել այնպես, որ պահպանել են իրենց անկախությունը, ինքնիշխանությունը, լեզուն, մշակույթը և սովորույթները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՉԱՏ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱԼ

Եվրամիությունում եվրոպական 27 երկրներ ունեն ընդհանուր ազատ ներքին շուկա: Սա նշանակում է, որ եվրոպական բոլոր պետությունները վերացրել են միմյանց նկատմամբ ապրանքների և ծառայությունների տեղաշարժի սահմանափակումները: Նախկինում յուրաքանչյուր պետություն ուներ իր մաքսային օրենսդրությունը, տարբեր տուրքեր, հարկեր, կանոններ, ինչը խանգարում էր միմյանց միջև արդյունավետ առևտրին: Հաճախ այս կանոնները խտրական և հովանավորչական էին: Ի վերջո, Եվրամիության երկրները համաձայնության եկան վերացնել ցանկացած խանգարող և սահմանափակող արգելքներ: Նրանք միմյանց նկատմամբ սահմանեցին ընդհանուր և հավասար կարգ: Այսօր Եվրամիության մի երկրից մյուսը բիզնեսները, առևտրականները, ցանկացած անձ ազատ և օրինական տեղափոխում են, արտադրում և վաճառում են ապրանքներ: Եվրամիության ներքին շուկայում բոլոր կանոնները հավասարապես վերաբերում են բոլոր պետություններին (մեծ

թե փոքր), բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձանց: Դա հանգեցրել է բիզնեսի ամրապնդմանը, արտադրության զարգացմանը, առևտրի աճին, ավելի շատ աշխատատեղերի ստեղծմանը, մարդկանց բարեկեցության և կապիտալի ավելացմանը:

Եվրամիության ներքին շուկան 500 միլիոնանոց ազատ սպառողական շուկա է: Այսօր ամբողջ աշխարհը փորձում է իր սեփական արտադրության արդյունքները (ապրանքներ, ծառայություններ) ներմուծել Եվրամիության ներքին շուկա և վաճառել դրանք: Եվրամիությունից դուրս գտնվող երկրները (երրորդ երկրներ) կարիք չունեն առանձին-առանձին բանակցություններ վարելու Եվրամիության երկրների հետ առևտրի նպատակով, քանի որ Եվրամիության անդամ երկրներում գործում է ներքին շուկայի մեկ կանոն: Այսպիսով, երրորդ երկրները կարող են ուղղակիորեն համաձայնության գալ Եվրամիության հետ և օգտվել ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժից նրա ցանկացած երկրում: Վրաստանը, անկախ նրանից ապրանք է ներկրում Ֆրանսիա, թե Լատվիա, ամենուր նույն մաքսային կարգին է հանդիպում: Այս գործոնը Եվրամիության ներքին շուկան շատ գրավիչ և արդյունավետ է դարձրել: Ներքին շուկայի նման կազմակերպման շնորհիվ Եվրամիությունը համարվում է ամենամեծ տնտեսություններից մեկը:

Ասոցացման համաձայնագրի և DCFTA-ի շրջանակներում Վրաստանի համար մեծ հնարավորություններ են բացվում Եվրամիության ներքին շուկայի ուղղությամբ:

ԱՍՈՑԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ (AA) ԵՎ ԽՈՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՉԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏԻ (DCFTA)

2014 թվականի հունիսի 27-ին Վրաստանը և Եվրամիությունը ստորագրեցին Ասոցացման համաձայնագիր: 2014 թվականի հուլիսի 18-ին Վրաստանը վավերացրեց Ասոցացման համաձայնագիրը: Ասոցացման համաձայնագիրը ժամա-

Նաև ավոր կիրարկման ռեժիմի ուժով գործարկվել է 2014 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ ամբողջությամբ ուժի մեջ է մտնել 2016 թվականի հուլիսի 1-ին:

2014 թվականին Ասոցացման համաձայնագրի կնքմամբ, Վրաստանի և Եվրամիության միջև սկսվեց խորացված հարաբերությունների դարաշրջանը՝ քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման, այդ թվում հորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (DCFTA) ձևավորման:

Ասոցացման համաձայնագիրը Վրաստանի ապագայի մեջ ներդրումներ կատարելու մեծագույն հնարավորությունն է: Դա Վրաստանի ներքին բարեփոխումների իրականացման փաստաթուղթ է, որի արդյունքն պետք է լինի կայուն զարգացումը, մարդու իրավունքների բարձր չափորոշյով պաշտպանումը, օրենքի գերակայությունը, արտադրության և բարեկեցության աճը, սոցիալական չափման ամրապնդումը, արժանապատիվ աշխատանքը և զբաղվածությունը բոլորի համար, համախմբումը սերունդների միջև (ներկայիս սերունդների պատասխանատու և բարեխիղճ վարքը ապագա սերունդների բարօրության համար): Այս արդյունքներին հասնելու համար Ասոցացման համաձայնագիրը սահմանում է բովանդակային պարտավորություններ, որոնք Վրաստանը պետք է կատարի, և ժամկետները, երբ դրանք պետք է կատարի: Վրաստանը պետք է ազգային օրենսդրության մեջ և պրակտիկայում արտացոլի եվրոպական չափորոշիչները: Այս գործընթացը կոչվում է իրավական մերձեցում / իրավական ապրոքսիմացիա:

Ասոցացման համաձայնագիրը ծավալով մեծ է՝ ավելի քան 1000 էջի վրա է շարադրված: Ասոցացման համաձայնագրի հավելվածները սահմանում են Եվրամիության ավելի քան 300 օրենքների ցուցակ, որոնց պետք է մոտենա Վրաստանը: Վրաստանը մերձեցումը (ապրոքսիմացիան) պետք է իրականացնի միայն Վրաստանի ժողովրդի և երկրի օգտին: Այդ

պատճառով էլ պետք է համակարգված ստուգվի, թե Եվրոպական սոցիալական ունի արդյոք առողջ, արդյունավետ և օգտակար արդյունքներ: Ասոցացման համաձայնագիրը նախատեսում է առաջընթացի շարունակական մշտադիտարկում: Այդ մշտադիտարկումն իրականացնում են հենց Վրաստանի իշխանությունը, Եվրամիությունը և քաղաքացիական հասարակության պլատֆորմը (ոչ պետական հատված, մասնավոր հատված, փորձագետներ):

DCFTA-ն խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու մասին համաձայնագիր է, որը Ասոցացման համաձայնագրի մաս է (մասնավորապես, Գլուխ IV): Այլ կերպ ասած, DCFTA- ն վրացական արտադրությունը զարգացնելու և ուժեղացնելու հնարավորություն է, այնպիսի շուկա ձևավորելու և ստեղծելու հնարավորություն, որտեղ պաշտպանված կլինեն ինչպես բիզնեսի, այնպես էլ բնապահպանական և սոցիալական շահերը: Եվրամիությունը ստեղծել և ձևավորել է այնպիսի կայուն և ազատ շուկա, որտեղ հավասարապես պաշտպանված են բիզնեսի և մարդկանց պահանջմունքները, որտեղ Էկոնոմիկան ու առևտուրը ծառայում են մարդկանց, և, ընդհակառակը, մարդիկ՝ իրենց կարողություններով, բանականությամբ, կրթությամբ և հնարավորություններով Էկոնոմիկայի գլխավոր շարժիչ ուժն են, իսկ երկուսը միասին ստեղծում են կապիտալ և բարեկեցություն, կառուցում հզոր պետություն և հասարակություն: Շուկայի նման մոդելը եզակի է:

Ըստ DCFTA-ի՝ ցանկացած ներդրող պետք է իրականացնի այնպիսի գործունեություն, որտեղ պաշտպանված կլինի՝

- Վրաստանի բնությունը (ջուր, օդ, հող, բույսեր), որը Վրաստանի քաղաքացիների կյանքի և առողջության երաշխիքն է.
- Բեղմնավոր զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի սկզբունքը, ինչը Վրաստանի քաղաքացիներին

հնարավորություն կտա ներդաշնակորեն հավասարակշռել մասնագիտական և անձնական/ընտանեկան կյանքը, եկամուտ ստանալ և բարձրացնել իրենց բարեկեցությունը:

- Ձեռնարկատիրության ազատություն, որը բիզնեսի համար կստեղծի ազատ զարգանալու և գործելու պայմաններ, որտեղ բիզնեսը կգործի Վրաստանի օրենսդրության պահանջների պահպանմամբ և Վրաստանի ժողովրդի և պետության շահերի հարգանքով, որտեղ խոշոր բիզնեսը չի ճնշի փոքր բիզնեսին, որտեղ բոլոր բիզնեսները կունենան զարգացման հավասար հնարավորություններ, որտեղ պետությունը բոլոր բիզնեսների նկատմամբ կգործի հավասար և անաչառ, որտեղ պետությունը կօգնի փոքր և միջին բիզնեսին:

DCFTA-ն նախատեսում է նաև Եվրամիության ներքին շուկայում մաքսային նախապատվությունների տրամադրում այն ապրանքներին, որոնց ծագման երկիրը Վրաստանն է: Այսինքն՝ Եվրամիությունը մեծ խթան է տալիս Վրաստանին և վրացական բիզնեսին՝ առաջարկելով վերականգնել և ուժեղացնել ազգային արտադրությունը: Եվրամիությունը մաքսատուրքերից կազատի միայն այն ապրանքները, որոնք վրացական են:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴՆԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԷԸ

Եվրամիությունն իր քաղաքացիներին առաջարկում է ազատության, անվտանգության և արդարադատության տարածք առանց ներքին սահմանների, որտեղ մարդիկ ապահովված են ազատ տեղաշարժով: Այստեղ երաշխավորված է անվտանգության և պաշտպանության բարձր մակարդակը հանցագործության, ռասիզմի, այլատյացության դեմ պայքարի և

կանխարգելման համար անհրաժեշտ մեխանիզմների միջոցով, որոնք համակարգվում են անդամ երկրների ոստիկանության և այլ իրավասու մարմինների միջև համագործակցությամբ:

2017 թվականին Եվրամիությունը օրենք ընդունեց, որը թույլ է տալիս Վրաստանի քաղաքացիներին առանց վիզայի մուտք գործել Շենգենյան գոտի և ազատ ճանապարհորդել (90 օրից մինչև 180 օր): Այս հնարավորությունը բացվելուց ի վեր՝ Վրաստանի տասնյակ հազարավոր քաղաքացիներ ազատ ճանապարհորդել են Շենգենյան տարբեր երկրներ՝ առանց վիզայի կամ սահմանի հատման վճարների: Շենգենյան երկրներ ավելի քան մեկ միլիոն մուտք կա Վրաստանից: Ժողովուրդների միջև խորացան կապերը, համատեղ տարբեր գործունեություններ սկսվեցին: Վրաստանի քաղաքացիները իրենց աչքերով, ականջներով տեսնում են ու ծանոթանում, որ Եվրամիությունում ցանկացած անձ պաշտպանված է, նրանք հարգում են բոլորին՝ անկախ ռասայից, մաշկից, լեզվից և այլն:

ԼԵԶՎԻ ՀԱՐԳԱՆՔԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Եվրամիությունը հարգում է յուրաքանչյուր անդամ պետության լեզուն: Այդ պատճառով Եվրամիությունում կա 24 պաշտոնական և աշխատանքային լեզու: Սա նշանակում է հետևյալը. երբ Եվրամիությունը ընդունում է օրենքներ, որոշումներ, դրանք թարգմանվում են բոլոր եվրոպական լեզուներով և փոխանցվում ժողովրդին իր պետական լեզվով:

Այս սկզբունքն արտացոլված է նաև Ասոցացման համաձայնագրում: Ըստ Ասոցացման համաձայնագրի, իրավական մերձեցման ընթացքում (ապրոքսիմացիայի ընթացքում), Վրաստանը պետք է թարգմանի եվրոպական միության օրենսդրությունը՝ որպեսզի տեղի ունենա եվրոպական չափորոշիչների ճշգրիտ ճանաչում, ըմբռնում և ճիշտ ներառում ազգային օրենսդրության մեջ: Բացի այդ, Եվրամիությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Վրաստանին՝

օտարերկրյա օրենսդրությունը վրացերեն թարգմանելու համար:

Համաձայն Վրաստանի Կառավարության թիվ 2014 թվականի 186 որոշման, Եվրամիության օրենսդրության վրացերեն թարգմանությունը պետք է իրականացվի Վրաստանի արդարադատության նախարարության ՀԻԻՎ Օրենսդրական տեղեկատուի կողմից:

Եթե Վրաստանը անդամակցի Եվրամիությանը, ապա Վրաստանի պետական լեզուն կդառնա Եվրամիության պաշտոնական և աշխատանքային լեզու:

ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ՎՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ընտանիքը և ընտանիքի միասնության պահպանումը Եվրոպական միությունում հիմնարար արժեքների մաս է կազմում: Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական Միության խարտիայի համաձայն.

- Բոլորն ունեն անձնական կյանքը և ընտանեկան կյանքը պաշտպանելու իրավունք:
- Ամուսնանալու իրավունքը և ընտանիք կազմելու իրավունքը երաշխավորված է Ազգային օրենսդրությամբ:
- Ընտանիքն օգտվում է իրավական, տնտեսական և սոցիալական պաշտպանվածությամբ:
- Ընտանեկան և մասնագիտական կյանքը համատեղելու համար յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտպանված լինելու աշխատանքից ազատվելուց՝ մոր դեկրետային արձակուրդի և ծնողի արձակուրդի ու որդեգրման արձակուրդի ընթացքում:

Եվրամիության յուրաքանչյուր անդամ պետությունն ունի ընտանիքի վերաբերյալ իր պատմական, մշակութային, սովորութային պատկերացումներն ու աշխարհայացքը, որոնք արտացոլված են յուրաքանչյուր երկրի սահմանադրության

մեջ: Օրինակ՝ Լատվիան Եվրամիության անդամ է: Լատվիայի սահմանադրության մեջ ասվում է. «Պետությունը պաշտպանում և աջակցում է ամուսնությունը՝ տղամարդու և կնոջ միությունը ...»: Լեհաստանը Եվրամիության անդամ է: Լեհաստանի սահմանադրության մեջ գրված է. «Ամուսնությունը միություն է տղամարդու և կնոջ միջև, ինչպես նաև՝ ընտանիքը, մայրությունը և ծնող լինելը պաշտպանում և հովանավորում է Լեհաստանի Հանրապետությունը»:

Վերոնշյալ և այլ օրինակները վկայում են, որ Եվրամիությունը չի միջամտում երկրների ինքնության և ամուսնության ու ընտանիքի հետ կապված աշխարհայացքների ասպեկտներին: Այսպիսով, Եվրամիությունը երբևէ չի պահանջել և ոչ էլ հետագայում կպահանջի Վրաստանից փոխել իր վերաբերմունքն ընտանիքի և ամուսնության նկատմամբ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Եվրամիությունն ամեն տարի Վրաստանին աջակցում է առնվազն 350 միլիոն լարիով, որը տրամադրվում է տարբեր ոլորտների՝ ներառյալ տնտեսական և մասնավոր հատվածի աջակցությանը, գյուղատնտեսությանը, կրթությանը, պետական կառավարմանը, արդարադատությանը, շրջակա միջավայրին, տրանսպորտին, մշակույթին:

Եվրամիության օգնությամբ ստեղծվել է Նոր կայք, որտեղ նկարագրված է ավելի քան 160 նախագիծ, որոնք Վրաստանն այժմ իրականացնում է Եվրամիության օգնությամբ: Այս կայքն է՝

<https://eu4georgia.ge>

<https://eu4georgia.ge/ka>

2017-2020 թվականների համար Եվրամիությունը Վրաստանին անհատական աջակցության շրջանակի (Single Support Framework) սահմաններում տրամադրել է 371 միլիոն եվրոյից մինչև 453 միլիոն եվրոյի չափով ֆինանսական օգնություն:

Այս գումարի 40%-ն ուղղվել է տնտեսական զարգացման և շուկայի հնարավորությունների աճի ծրագրերին, 20%՝ լավ կառավարման և ինստիտուցիոնալ ամրապնդման ծրագրերին, 15%՝ նախագծերին Էներգախնայողության, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության ոլորտում, 10%՝ ժողովուրդների միջև միության աջակցությանը և շարժունության նախագծերին, 5%՝ ռազմավարական հաղորդակցության աջակցության նախագծերին, 5%՝ քաղաքացիական հատվածի զարգացման աջակցության ծրագրերին, 5%՝ ինստիտուցիոնալ կառուցման և հնարավորությունների լրացուցիչ աջակցության նախագծերին:

Բացի վերը նշվածից, Վրաստանը հանդիսանում է Եվրամիության տարածաշրջանային և մուլտի-պետությունների գործողությունների ծրագրերի հիմնադրամի շահառու: Վրաստանը նաև օգնություն և աջակցություն է ստանում «Հորիզոն 2020» (Horizon 2020), «Էրազմուս +» (Erasmus+) և «Ստեղծագործ Եվրոպա» (Creative Europe) ծրագրերի շրջանակներում:

Covid-19-ի համավարակի և արտակարգ դրության ժամանակ, մինչ Եվրամիությունն ինքն ուներ մեծ խնդիրներ, նա կարողացավ մոբիլիզացնել 1.5 միլիարդ լարի՝ Վրաստանին օգնելու հաղթահարել ճգնաժամը: Սա Եվրամիության կողմից Վրաստանին աննախադեպ աջակցություն էր առողջապահության ոլորտում առկա խնդիրների հաղթահարման և հետագա տնտեսական և սոցիալական մարտահրավերների դեմ պայքարելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՆ ՈՒ ԱՍՈՑԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Եվրամիության մեծ ջանքերի և ֆինանսական օժանդակության արդյունքում Վրաստանում ձևավորվել է աշխատանքի տեսչության գործիք, որի գործառույթն է աշխատողների անվտանգության մշտադիտարկումն ու պաշտպանությունը:

Եվրամիության կողմից բազմանգամյա փորձերի արդյունքում փոփոխություններ են կատարվել Վրաստանի աշխատանքային օրենսգրքում, որի արդյունքում ընդլայնվել է աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության չափորոշիչը:

Ասոցացման համաձայնագրի համաձայն՝ Վրաստանը պարտավոր է ստեղծել մարդու աշխատանքային իրավունքների պաշտպանության բարձր չափորոշիչ, բոլորի համար ստեղծել պայմաններ արդյունավետ և լիարժեք աշխատանքի համար: Եվրամիության աշխատանքային օրենսդրության և պրակտիկայի համաձայն, մարդու արժանավայել աշխատանքը արժանավայել կենցաղի, արժանավայել անձնական և ընտանեկան կյանքի ապահովման երաշխավորն են:

Վրաստանում նույնպես յուրաքանչյուր քաղաքացի, ով ցանկանում է աշխատել, պետք է իրեն պաշտպանված ու արժանապատիվ զգա: Անգամ այս նպատակին հասնելու համար Եվրամիության աջակցությունը Վրաստանին բավականին հիմնավոր և մեծ է:

Արժանավայել աշխատանքային պայմաններ հաստատելու նպատակով Վրաստանը Ազգային օրենսդրության և պրակտիկայի մեջ պետք է արտացոլի Եվրամիության Աշխատանքային օրենսդրության այնպիսի չափորոշիչներ, որոնք կապված են շաբաթվա ընթացքում նորմավորված աշխատանքային ժամերի, արտաժամյա աշխատանքի սահմանաչափման և արդարացի վարձատրության, հանգստի,

ընդամիջման, աշխատողների հետապնդումների արգելքի հետ, երբ նա պաշտպանում է սեփական իրավունքներն աշխատատեղում, մայրական դեկրետային արձակուրդի արժանապատիվ վարձատրություն, անչափահասի աշխատանքային իրավունքների պաշտպանություն այնպես, որ չխանգարի նրա կրթությանը, բարոյական, ֆիզիկական զարգացմանը, աշխատողի ֆիզիկական անվտանգությանը, գործատուի, պետության և այլոց կողմից աշխատողի առողջության վերահսկմանը:

Ինչ վերաբերում է աշխատատեղերի ստեղծմանը, ապա դա եվրոպական ինտեգրման գերակա հարցերից մեկն է ինչպես առևտրատնտեսական, այնպես էլ սոցիալական քաղաքականության ոլորտում: Այդ նպատակով Եվրամիությունը ֆինանսական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում Վրաստանի փոքր և միջին բիզնեսին: Նման աջակցության արդյունքում փոքր և միջին բիզնեսը ստեղծում է աշխատատեղեր: Ասոցացման համաձայնագրի 2019 թվականի կատարման զեկույցում նշված է, որ 521 փոքր և միջին բիզնեսի (որն իրականացվել է «Արտադրի՛ր Վրաստանում» ծրագրի շրջանակներում) տրամադրված օգնության արդյունքում Վրաստանում ստեղծվել է 18270-ից ավելի աշխատատեղ:

ՎՐԱՑԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Եվրոպական միության շուկա են արտահանվում վրացական գինի, գարեջուր, լիմոնադ, կահույք (կենդանիների տներ), դափնի, բժշկության մեջ օգտագործվող բույսեր և դեղաբույսեր, հանքային ջուր, մրգահյութ, ջեմ, բանջարեղեն, հատապտուղներ, չուրչխեժա, չրեր, թեյ, բուրդ, շինանյութեր, աթեստուարներ և այլն:

Որոշ պրակտիկա.

Վրաստանը **պնդուկի** հինգ խոշորագույն արտահանող

երկրներից մեկն է: Վրացական պնդուկի ամենամեծ արտահանման շուկան (շուկայի 60%-ը) բաժին է ընկնում եվրոպական երկրներին: Վրացական պնդուկի ավելի քան 75%-ն արտահանվում է Արևմտյան Եվրոպայի երկրներ: Եվրամիության շուկաներում ամենահզոր մրցակիցը Թուրքիան է, սակայն, վրացական պնդուկի առավելությունը կարելի է համարել յուզայնության բարձր պարունակությունը, որը 7-8%-ով ավելի է, քան թուրքական պնդուկի տեսակներինը:

Համաձայն անցկացված հետազոտության՝ **կիվի** աճեցնելու համար լավագույն կլիման Նոր Զելանդիայից հետո Վրաստանում է, մասնավորապես՝ Փոթի-Չուգոդի-Գալի-Օչամչիրեում: Վրացական կիվիի առավելություններից մեկը շաքարի մեծ պարունակությունն է: Իտալական կիվիի շաքարի պարունակությունը 13,9% է, իսկ վրացական կիվիի քաղցրությունը՝ 17,3%: Այսօր «Ներգետա» ընկերությունը Չուգոդիի շրջանի Ինգիրի գյուղում աճեցված կիվին վաճառում է Եվրամիությունում:

«Վրացական կանաչեղենը հասունանում է տարվա շատ լավ ժամանակաշրջանում. սեպտեմբերից մայիս ընկած ժամանակահատվածում՝ սա այն ժամանակահատվածն է, երբ Եվրոպային կանաչի է անհրաժեշտ», - այսպես է գնահատել հոլանդական bilancia ընկերությունը վրացական կանաչեղենը՝ ուսումնասիրելով Եվրամիությունում վաճառքի ներուժը: Իմերեթի գրեթե 1000 ջերմոցային տնտեսություններում 550 փոքր ձեռնարկատերեր և 10 խոշոր ձեռնարկություններ տարեկան շուրջ 25 000 տոննա կանաչեղեն են աճեցնում:

Բուրդը կենդանական ծագման առաջին արտադրանքն է, որի արտահանում թույլ է տրվել Եվրամիության կողմից: Եվրամիությունը ճանաչել է բրդի արտադրության երկու ընկերություն՝ ՍՊԸ Ջորջիան Վուլ և ՍՊԸ Վրացական բրդի ընկերություն:

Վրացական **մեղրը** յուրահատուկ բույր ու համ ունի, ուստի այն միշտ բարձր գնահատանքի է արժանանում տարբեր միջազգային ցուցահանդեսներում: Մեղրը երկրորդ կենդանական ծագման արտադրանքն է, որի առջև եվրամիությունը ամբողջությամբ բացել է շուկան:

Եվրամիության ներքին շուկան մեծ է, և այն արտադրանքի մեծ պահանջարկ ունի: Այդ պատճառով Վրաստանում արտադրողների համար կարևոր է կոոպերատիվներ ստեղծել՝ միավորել ջանքերը, կապիտալը և ռեսուրսները: Նման միավորումների ստեղծմանը աջակցում է նաև Եվրամիությունը: Օրինակ, Վրաստանի կառավարությունը, Եվրամիության օգնությամբ, սկսել է ներդնել ֆերմերների կոոպերացիայի եվրոպական փորձ: Այսօր երկրում գրանցված է ավելի քան 1500 գյուղատնտեսական կոոպերատիվ, որոնք միավորում են ավելի քան 13,000-ից ավելի ֆերմերների: Եվրամիությունը 4 միլիոն եվրոյի չափով ուղղակի դրամաշնորհային օգնություն է տրամադրել ավելի քան 200 կոոպերատիվների, որոնք ավելի քան 2000 ֆերմերների են միավորում: Ավելի քան 7200 ֆերմերներ վերապատրաստվել են Եվրամիության ֆինանսավորմամբ:

ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՆԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպեսզի Վրաստանում արտադրված ապրանքը և պարենամթերքը Եվրոպական միության շուկայում վաճառվի, պետք է բավարարի անվնաս լինելու և անվտանգության չափորոշիչը: Եվրամիության երկրներում մարդը բարձրագույն և գերագույն բարիքն է, և ամեն ինչ պետք է ծառայի նրա բարեկեցությանը, ներառյալ բիզնեսը: Այսպիսով, սննդամթերքի անվտանգությունը ստուգելը նշանակում է մարդու կյանքի և առողջության անվտանգություն:

Սննդամթերքի անվտանգությունը կախված է ջրի

և հողի առողջությունից, բույսերի և կենդանիների բուսասանիտարական և հիգիենիկ նորմերից, սննդամթերքի արտադրության տեխնոլոգիաների սարքինությունից և մաքրությունից: Հետևաբար, ստուգվում է արտադրության գործընթացի յուրաքանչյուր հատված «ֆերմայից մինչև սեղան»: Օրինակ, որպեսզի միսն անվնաս լինի, անհրաժեշտ է, որ կենդանու պահման տեղը մաքուր լինի, կենդանուն առողջ սնունդ տրվի, կենդանին ենթարկվի անասնաբույժի վերահսկողության (ինչ հիվանդություններ է փոխանցում, ինչ դեղեր են տալիս), կենդանու մորթը, պահումը և փաթեթավորումը կատարվի սահմանված կարգով և այլն:

Անվնասության ու անվտանգության ապահովման համար Վրաստանի կառավարությունը որոշումներ է կայացնում, օրինակ.

- Կենդանիների նույնականացման-գրանցման և նրանց պահման տեղերի/ ժամանակավոր պահման տեղերի հաշվառման կանոնները հաստատելու մասին Վրաստանի կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 483 որոշումը:
- Կարտոֆիլի կլոր հոտում հիվանդության վերահսկման ընթացակարգերի հաստատման մասին Վրաստանի կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 15-ի # 553 որոշումը:
- Այլ

Անվտանգության չափորոշիչների հաստատում. Սա նշանակում է, որ ցանկացած ֆերմեր և ձեռնարկատեր պարտավոր է մտածել ոչ միայն տնտեսական շահույթի, այլև մարդկանց բարեկեցության մասին: **Դա ոչ միայն մարդու մասին հոգածության, այլև ան արտադրողի, ֆերմերի հեղինակության, անվան և արժանապատվության խնդիր է: Այդպիսին է եվրոպական չափորոշիչը:**

Ոմանք ասում են, որ Վրաստանում անվտանգ և անվնաս սնունդ պետք է արտադրվի, որպեսզի վաճառվի Եվրամիության շուկայում: Սա սխալ է. Վրաստանում անվտանգ և անվնաս սնունդ պետք է արտադրվի, որպեսզի և՛ Եվրամիությունում, և՛ այլ երկրներում այնպիսի ապրանքներ վաճառվեն, որոնք չեն վնասում ո՛չ Վրաստանի քաղաքացիներին, ո՛չ էլ օտարերկրացիներին:

Որպեսզի Վրաստանում արտադրվող սնունդը լինի առողջ և անվնաս, անհրաժեշտ են սննդի հետազոտման և փորձարկման տարբեր լաբորատորիաներ: Եվրամիությունն այս հարցում նույնպես օգնում է Վրաստանին: Ներկայումս Վրաստանում գործում է լաբորատոր ցանց, որն իր մեջ ներառում է ՀԻԻԱ Գյուղատնտեսական պետական լաբորատորիան, մասնավորապես՝ Նրա հովանու ներքո գտնվող 3 զոնալ ախտորոշիչ լաբորատորիաներ (Թբիլիսի, Քութաիսի, Ախալցխե) և 8 տարածաշրջանային լաբորատորիաներ (Գորի, Մառնեուլի, Դուշեթի, Գուրջաանի, Ամբրուլաուրի, Օզուրգեթի, Չուգոդիդի, Բաթումի): Լաբորատորիաները ոչ միայն նպաստում են անվտանգության չափորոշիչի սահմանմանն ու պահպանմանը, այլև ստեղծում են աշխատատեղեր:

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ասոցացման համաձայնագրի համաձայն, պետք է ապահովվի սպառողների իրավունքների պաշտպանության բարձր մակարդակ: Սպառողի իրավունքները մարդու իրավունքների կարևոր մասն են կազմում: Բավարարված հաճախորդը նշանակում է, որ բիզնեսն ու արտադրությունը մրցունակ են և գործում են սպառողի պահանջներին համապատասխան:

Սպառողը գոի է, երբ ընտրություն ունի, գները մատչելի են, ապրանքներն ու ծառայությունները որակյալ են, տեղեկացված է (չեն ստում Նրան), Նրան վերաբերվում են հարգանքով: Եվրամիությունում մեծ ուշադրություն է դարձվում սպառողների

իրավունքների պաշտպանությանը: Այդ նպատակով օրենքներ են ընդունվել և պաշտպանության տարբեր մեխանիզմներ ձևավորվել:

Եվրոպական ինտեգրման քաղաքականության ազդեցության տակ՝ Վրաստանում սպառողների պաշտպանության որոշ ասպեկտներ զարգացել են դեպի դրական պրակտիկա: Օրինակ՝ խանութները հետ են ընդունում հագուստը (փոխելու նպատակով) կամ փչացած ապրանքները:

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՅՔԱՐ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Եվրոպական ինտեգրման քաղաքականության շրջանակներում 2015 թվականին Վրաստանի խորհրդարանն ընդունեց «խտրականության դեմ պայքարի բոլոր ձևերի վերացման մասին» օրենքը: Օրենքին համապատասխան սահմանվել են հասկացություններ և մեխանիզմներ, որպեսզի խտրականությունը վերացվի ցանկացած հարաբերությունների ձևաչափով՝ լինեն դրանք աշխատանքային հարաբերություններ, կրթության ոլորտ, դավանանք, լեզու, ազգություն, գույքային վիճակ, ընտանեկան կարգավիճակ, մաշկի գույն, սեռ կամ այլ:

Խտրականություն է համարվում ինչպես ոտնձգությունը, այնպես էլ տարբեր կերպ վերաբերվելը: Ոտնձգությունը անձի հետապնդումն է որևէ հիմքով, հարկադրանքը և (կամ) անցանկալի պահվածքն անձի նկատմամբ, որը նպատակ է հետապնդում կամ հանգեցնում է անձի արժանապատվության ոտնահարման և նրա համար վախեցնող, թշնամական, նվաստացնող, արժանապատվությունը ոտնահարող կամ անարգող միջավայրի ստեղծման: **Տարբեր կերպ վերաբերվել է,** երբ անձի նկատմամբ իրականացվում է այնպիսի գործողություն, որը վատթարացնում է նրա վիճակը նման իրավիճակում գտնվող մեկ այլ անձի հետ համեմատած:

Տարբեր կերպ վերաբերմունքը միշտ չէ, որ խտրականություն է:

Մեր կողքին ապրում են մարդիկ, ովքեր կարիք ունեն ուժեղացման, աջակցության, հնարավորությունների հավասարեցման: Հետևաբար, եթե տարբեր կերպ են վերաբերվում հոյ կնոջը, սահմանափակ հնարավորություն ունեցող անձին, էթնիկ փոքրամասնությանը և այլն, դա չի համարվում խտրականություն: **Սակայն, այդպիսի տարբեր վերաբերմունքը պետք է լինի ողջամիտ, անհրաժեշտ, համաչափ, օրինական նպատակին հասնելու համար անհրաժեշտ, ժողովրդավարական հասարակության կայացման համար անհրաժեշտ, բարոյական և էթիկական:**

Օգտագործված աղբյուրներ.

Վրաստանի սահմանադրություն, <https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication=35>

Անցացման համաձայնագիր մի կողմից Վրաստանի և մյուս կողմից՝ Եվրամիության և Ատոմային Էներգիայի Եվրոպական միության և Նրանց անդամ պետությունների միջև (Անցացման համաձայնագիր), <https://matsne.gov.ge/document/view/2496959>

Վրաստանի օրենք «խտրականության բոլոր ձևերի վերացման մասին», <https://matsne.gov.ge/document/view/2339687?publication=1>

2019-2022 թվականների Վրաստանի արտաքին քաղաքականության ռազմավարությունը, <https://mfa.gov.ge/getattachment/MainNav/ForeignPolicy/ForeignPolicyStrategy/2019-2022-clebis-saqartvelos-sagareo-politikis-strategia.pdf.aspx>

Վրաստանի ազգային անվտանգության հայեցակարգ, <https://mod.gov.ge/uploads/2018/pdf/NSC-GEO.pdf>

Համաձայնագիր գործընկերության և համագործակցության

მასიხ, <https://matsne.gov.ge/ka/document/view/1212956?publication=0>

Վրաստանի կառավարության հրամանագիր №765, 2017 թվականի 13 ապրիլի, Եվրամիությանը և ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հաղորդակցության վերաբերյալ Վրաստանի կառավարության 2017-2020 թվականների ռազմավարության հաստատման վերաբերյալ, <https://matsne.gov.ge/ka/document/view/3650131?publication=0>

Վրաստանի կառավարության որոշում №533, 2017 թվականի 7 դեկտեմբերի, «Վրաստանի կրթության և գիտության 2017–2021 թվականների համատեղ ռազմավարության հաստատման մասին, հավելված 1, <https://matsne.gov.ge/document/view/3924876?publication=0>

Վրաստանի կառավարության հրամանագիր №186, 2014 թվականի 7 փետրվարի, Վրաստանի և Եվրամիության միջև Անցագման համաձայնագիրը, որը ներառում է հորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագիրը, դրա արդյունավետ իրականացման համար ձեռնարկվելիք միջոցառումների մասին. <https://matsne.gov.ge/ka/document/view/2250269?publication=0>

Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա, https://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf

Եվրամիությունը Վրաստանի համար, ENPARD, Տեղեկատվական տեղեկագիր, <http://enpard.ge/ge/newsletters/newsletter01/>

Վրաստանի օրենսդրական տեղեկատու, www.matsne.gov.ge

<http://eugeorgia.info/ka/>

dcfta.gov.ge

<https://eu4georgia.ge/>

**ՎՐԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Մշակութային ժառանգությունը պահպանելը, դրան տեր կանգնելը և սերունդների համար պահպանելը Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու սուրբ պարտքն է: Համաձայն Վրաստանի Սահմանադրության V հոդվածի VI կետի՝ «Պետությունը հոգ է տանում մագալինար ժեքների և ինքնության, մշակութային ժառանգության, կրթության, գիտության և մշակույթի զարգացման մասին», իսկ Սահմանադրության XX հոդվածի IV կետում ասվում է, որ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի հոգ տանել մշակութային ժառանգության պահպանության մասին: Մշակութային ժառանգությունը պաշտպանված է օրենքով»:² Մշակութային ժառանգությունը պաշտպանված է «Մշակութային ժառանգության մասին» օրենքով, որն ընդունվել է Վրաստանի խորհրդարանի կողմից 2007 թվականին:³

Եվրամիության և Վրաստանի միջև 2014 թվականին Ասոցացման համաձայնագրի ստորագրումից ի վեր, մշակութային ժառանգության պաշտպանության քաղաքականության և օրենսդրության մերձեցումը ընդհանուր եվրոպական տարածքին Վրաստանի համար կարևորագույն խնդիր է, որն իր հերթին պետք է դրական ազդեցություն ունենա ոլորտի զարգացման և ապագա հեռանկարների վրա: Այս առումով հետաքրքիր է իմանալ, թե կրթության և գիտության ոլորտում այս Համաձայնագիրն ինչ հեռանկարներ է նախատեսում:⁴

2 <https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication=36>

3 <https://matsne.gov.ge/ka/document/view/21076?publication=14>

4 <http://www.parliament.ge/ge/gavigot-meti-evrokavshirtan-asocirebis-shetanx-mebis-shesaxeb/associationagreement1>

Ասոցացման համաձայնագիրը նախատեսում է կրթության և գիտության ոլորտում Վրաստանի մերձեցում Եվրամիության քաղաքականությանն ու փորձին: Առանձնահատուկ շեշտադրում է արվում բարձրագույն կրթության վրա: Բարձրագույն կրթության որակի բարելավումը պետք է համահունչ լինի Եվրամիության «Բարձրագույն կրթության արդիականացման օրակարգին» (Modernisation Agenda For Higher Education) և Բոլոնիայի գործընթացին: Ամրապնդվում է համագործակցությունը ակադեմիական ոլորտում, որը ներառում է ինստիտուցիոնալ համագործակցության ընդլայնում Եվրամիության անդամ երկրների և Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև, ինչպես նաև եվրոպական փորձի փոխանակում ուսումնական ծրագրերի մշակման, համալսարանական ենթակառուցվածքների բարելավման, կառավարման նոր մեթոդների և այլ ակադեմիական հարցերի ներդրման գործում, ինչպես նաև ուսանողների և համալսարանների ակադեմիական և վարչական աշխատակազմի փոխանակման ծրագրերի ավելացում և գործընկեր երկրների ուսանողների ներգրավում համատեղ մագիստրոսական ծրագրերի ամբողջական ցիկլի մեջ: Համապատասխանաբար, մեծանում է որակյալ եվրոպական կրթության մատչելիությունը վրացի ուսանողների համար՝ եվրոպական կրթաթոշակային և փոխանակման ծրագրերին մասնակցելու միջոցով, ինչը նպաստում է նաև Վրաստանի ինտեգրմանը Եվրամիության կրթական և գիտական տարածքին: Բացի այդ, Համաձայնագիրը վրացական գիտությանը հասանելի է դարձնում գործընկեր երկրների համապատասխան ծրագրերը, մեծացնում է վրացի հետազոտողների ներգրավվածությունը Եվրամիության շրջանակային հետազոտական ծրագրում, նպաստում է համատեղ նախագծերի իրականացմանը, հետազոտողների փոխանակմանը և այլն: Համաձայնագիրը նախատեսում է նաև ամբողջ կյանքի ընթացքում շարունակական ուսուցման խրախուսում և համագործակցություն մասնագիտական

կրթության և մասնագիտական ոլորտների զարգացման նպատակով, ինչը կնպաստի զբաղվածության խնդրի լուծմանը:

Ակնհայտ է, որ այստեղ ենթադրվում է նաև մշակութային ժառանգությունը և ինչպես մշակութային ժառանգության ոլորտում եվրոպական կրթությունը ստանալու հնարավորությունը, այնպես էլ վրացական մշակութային ժառանգության պահպանությունը, գիտական ուսումնասիրության և ընդհանուր կառավարման մերձեցումը եվրոպական ընդհանուր տարածքին: Այստեղ պետք է նշվի նաև այն իրականությունը, որ Վրաստանը Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրից շատ առաջ է սկսել հոգ տանել մշակութային ժառանգության ոլորտի ինչպես օրենսդրական բազայի, այնպես էլ գործնական գործունեությունը եվրոպական միջազգային կոնվենցիաներին համահունչ դարձնելու մասին:

Միջազգային կոնվենցիաներին Վրաստանի կողմից ստանձնած պարտավորությունը նշանակում է, որ մշակութային ժառանգությունը փոխանցվելու է ապագա սերունդներին իր սկզբնական վիճակով, լիարժեք բազմազանությամբ, որպես մարդկային հիշողության կարևորագույն մաս, քանի որ հակառակ դեպքում կվերանա մարդու այն գիտակցումը, որ այն ունի շարունակական զարգացում: Եվրոպական քաղաքակիրթ աշխարհը հատուկ նշանակություն է տալիս մշակութային ժառանգությանը՝ որպես հասարակության առաջնահերթ հոգածության առարկա և այն համարում է ցանկացած երկրի հիմնարար արժեք:

Եվրոպական մշակութային տարածքում վրացական մշակույթի ինտեգրումն արագացնելու և համաշխարհային գանձարանում Վրաստանի հուշարձանների համար պատշաճ տեղ գրավելու նպատակով մեր՝ ազգային մշակութային ժառանգության արժեքների պահպանությունը պետք է դառնա Վրաստանի ժողովրդավարական պետություն կառուցելու գերակա ուղղություններից մեկը: Սա ինչպես միջազգային և եվրոպական կոնվենցիաների, այնպես էլ, ընդհանուր առմամբ Եվրամիության հիմնական պահանջն է

Վրաստանի մշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրման և հետազոտման ոլորտում:

Այս առումով մեծ նշանակություն ունեցավ Վրաստան պետության միացումը 1992 թվականի Լա Վալետտայի «Հնագիտական ժառանգության պահպանության եվրոպական կոնվենցիային», որին մեծ նշանակություն է շնորհվում մշակութային ժառանգության ոլորտում՝ այսօր ընթացող բարդ գործընթացները կարգավորելու գործում: Կոնվենցիայի պահանջների գործնական իրականացումը զգալիորեն նպաստում է գոյություն ունեցող ժառանգության նորովի ուսումնասիրմանը, դրա պահպանությանը և հանրահռչակմանը: Կոնվենցիայի կողմից նախատեսված տեխնիկական և գիտական փոխօգնությունը նպաստում է փորձի փոխանակմանը: Կոնվենցիան անդրադառնում է քաղաքաշինության ամենացավոտ խնդիրներին, անմիջականորեն վերաբերում է քաղաքաշինության և հին քաղաքներում պատմական թաղամասերը փրկելու հարցերին: Այն սահմանում է այս ոլորտում միջազգային իրավական նորմերը երկրի կենտրոնական իշխանության և ինքնակառավարման մարմինների համար՝ առաջնահերթությունները ճիշտ և օբյեկտիվորեն որոշելու համար: Քանի որ Կոնվենցիայի նպատակը մշակութային և հնագիտական ժառանգության պահպանությունն է, այն երկրները, որոնք վավերացրել են այն, պարտավոր են ձևավորել համապատասխան իրավական դաշտ հնագիտական ժառանգության գրանցման, պատմական հուշարձանների և գոտիների դասակարգման և հնագիտական արգելոցների ստեղծման նպատակով: Անդամ երկրների կողմից պետք է ապահովվեն պեղումների և հնագիտական այլ գործողությունների օրինականությունը և վերահսկողությունը, ինչպես նաև՝ պեղումների անվտանգությունը և դրանց վարումը որակյալ մասնագետների կողմից:

«Լա Վալետտայի կոնվենցիային» զուգահեռ, Վրաստանը միացավ Գրանադայի «Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանության կոնվենցիային», որը

սահմանում է հնագիտական ժառանգության պահպանության իրավական ընթացակարգերը: Համաձայն Կոնվենցիայի, յուրաքանչյուր մասնակից երկիր պարտավոր է համապատասխան վերահսկողության և իրավասության շրջանակներում իրականացնել օրենքով սահմանված միջոցառումներ, որոնք, միևնույն ժամանակ, նախատեսում են յուրաքանչյուր պետության և տարածաշրջանի առանձնահատկությունները: Սրանով պետք է ապահովվի հուշարձանների, շենք-շինությունների և ճարտարապետական առումով տեսարժան վայրերի պահպանությունը վնասակար ազդեցություններից: «Գրանադայի» կոնվենցիան կոչ է անում անդամ պետություններին մշակել օրենսդրական ընթացակարգեր՝ պատմական շենք-շինությունների շուրջ փլուզումների, նոր շենքեր կառուցելու կամ ցանկացած այնպիսի փոփոխություն կանխելու համար, որը կհաթարի պատմական շենքերի ընդհանուր տեսքը:⁵ Համաձայն Նշված միջազգային կոնվենցիաների՝ պատմական վայրերը և դրանց հարակից տարածքները պետք է համարվեն Համաշխարհային ժառանգության բաղկացուցիչ մաս: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է պահպանել այդպիսի ժառանգությունը և այն վերածել ժամանակակից սոցիալական կյանքի մի մասի: Յուրաքանչյուր պատմական վայր և դրա շրջակայքը պետք է ընկալվեն միասնական համատեքստում: Հետևաբար, մեծ ուշադրություն պետք է դարձնել ներդաշնակությանը և գեղագիտական կողմին: Պետք է պահպանվի շենքերի խմբերի բաղադրիչների իրար նմանությունը, կապը կամ հակադրությունը, ինչը յուրաքանչյուր շենքի տալիս է հատուկ բնույթ, և որը պայմանավորում է նրա պատմական բնույթի պահպանում: Պատմական և հարակից տարածքները պետք է պաշտպանված լինեն ցանկացած տեսակի վնասումներից, հատկապես ոչ պատշաճ օգտագործումից, փոփոխություններից և աղտոտվածությունով հարուցված վնասներից: Միևնույն ժամանակ, ժամանակակից քաղաքաշինությունը, ելնելով

5 http://www.parliament.ge/files/714_9879_341434_kulturuli_memkvid_dacva.pdf

մասշտաբների հսկայական աճից և շենքերի առատությունից, ստեղծում է պատմական վայրերի ոչնչացման վտանգ և նաև դրանց ձևվածքի խախտման վտանգ է պարունակում: Ուստի ճարտարապետների և քաղաքաշինության ծառայությունների պարտականությունն է թույլ չտալ հուշարձանների տեսարանների աղավաղում:

Քաղաքացիական իրավունքի միավորման միջազգային ինստիտուտի (Unidroit) աջակցությամբ 1995 թվականի հունիսի 24-ին Հռոմում 70 երկրների ներկայացուցիչներ ընդունեցին «Գողացված կամ ապօրինի արտահանման ենթարկված մշակութային արժեքների մասին կոնվենցիան»: Այս կոնվենցիան նախատեսում է որոշակի պատժամիջոցներ երկրի տարածքից մշակութային արժեքների ապօրինի արտահանման դեպքում: Տուժած կողմ է համարվում ոչ միայն իրի սեփականատերը կամ պետությունը, այլևս գողացված կամ ապօրինի արտահանված իրի նոր սեփականատերը, ով օրինական ճանապարհով է գնել իրը և ոչինչ չգիտեր դրա մշակութային արժեքի մասին: Իրը առգրավելու դեպքում նա իրավունք ունի ստանալու փոխհատուցում:⁶

Վրաստանի մշակութային ժառանգության պաշտպանության գործում Եվրամիության դերը չի սահմանափակվել միայն եվրոպական կոնվենցիաներին միանալու հարցում Վրաստանի տեսական և իրավական օգնությամբ: Ձեռնարկվել են կոնկրետ քայլեր, որոնք ենթադրում էին ինչպես ֆինանսական, այնպես էլ մեր երկրի ժառանգության առջև ծառացած մարտահրավերները հաղթահարելու գործում եվրոպացի մասնագետների ակտիվ ներգրավվածություն և գործնական աջակցություն: Եվրոպացի մասնագետների օգնությամբ և ներգրավմամբ են մշակվել և պատրաստվել Վրաստանի մշակութային ժառանգության հուշարձանների նախնական գրանցման կամ անձնագրերի նմուշները, որոնք հիմնվում են այս ոլորտում Եվրամիության պետությունների (Իտալիա, Ֆրանսիա, Իսպանիա, Խորվաթիա) փորձի վրա, և այսօր

6 http://www.parliament.ge/files/714_9879_341434_kulturuli_memkvid_dacva.pdf

Վրաստանի մշակութային ժառանգության գրանցումը լիովին համապատասխանում է Եվրամիության չափորոշիչներին:

Նորվեգիայի պետության ֆինանսական աջակցությամբ Վրաստանի մշակութային ժառանգության պահպանության ազգային գործակալությունն իրականացրեց դարի նախագիծ, երբ ստեղծեց Վրաստանի մշակութային ժառանգության GIS հարթակը, որը մեկ համալիր համակարգ է և ներառում է տեղեկատվություն իրական և մշակութային ժառանգության շարժական և անշարժ օբյեկտների մասին: Պորտալի միջոցով յուրաքանչյուրը կարող է համապարփակ տեղեկատվություն ստանալ մշակութային արժեքների, ինչպես նաև ժառանգության պահպանության գոտիների, որմնանկարչության, քանդակագործության, թանգարանների և թանգարան-արգելոցներում պահպանվող արտեֆակտների մասին: Այստեղ միավորված են Վրաստանի մշակութային ժառանգության շտեմարաններ, արխիվային տվյալներ, կոնկրետ հուշարձանների ճարտարապետական գծագրեր, լուսանկարչական նյութ, մատենագրություն և այլն: GIS հարթակը հնարավորություն է տալիս աշխարհի ցանկացած կետից ինտերակտիվ ռեժիմով լրացնել և թարմացնել տեղեկատվությունը մշակութային ժառանգության վայրերի մասին:⁷

Իհարկե, XXI դարում նման հարթակի առկայությունը կարևոր և անհրաժեշտ է, մանավանդ որ Եվրոպայի շատ երկրներ (ներառյալ Եվրամիության) չեն կարող պարծենալ նման հատվածով: Սակայն Եվրամիության աջակցությունը չի ավարտվում միայն այս փաստերով: Եվրոպացի մասնագետների ակտիվ ներգրավմամբ իրականացվել է Վարձիայի եզակի որմնանկարների, Մցխեթայի Ջվարի տաճարի, Գելաթիի, Ջալիսիի եզակի անտիկ խճանկարի և շատ այլ կարևոր մշակութային հուշարձանների վերականգնման գործընթաց:

Եվրոպացի (գերմանացի, բրիտանացի, լեհ, իսպանացի) հնագետները երկար ժամանակ է ներգրավված են Վրաստանի այնպիսի հնագիտական հուշարձանների հետազոտության մեջ,

7 <http://memkvidreoba.gov.ge/>

ինչպիսիք են՝ Նոթալակին, Գոնիոն, Քուֆախին, Քոբուլեթ-Փիճվնարին, Նագարլեբին, Նացարգորան, Դեդոփլիս գորան, Խրամիս գորան, Դմանիսին, Արուխլոն և Սաղդրիսին: Ընդհանուր առմամբ, Եվրամիությունը ավելի քան 1 միլիոն եվրո է ծախսել այդ հուշարձանների դաշտային աշխատանքների և գիտական հրապարակումների վրա:

Վրաստանի մշակութային ժառանգության գիտական ուսումնասիրության գործում բեղմնավոր է Վրաստանի Շոթա Ռուսթավելի ազգային գիտական հիմնադրամի և Իտալիայի հետազոտական խորհրդի (CNR) համատեղ գիտական դրամաշնորհային ծրագիրը, որը նպաստում է վրացի և իտալացի գիտնականների կոոպերացիային և համագործակցությանը մշակութային ժառանգության տարբեր ուղղություններով (հնագիտություն, ազգագրություն, արվեստի պատմություն) համատեղ գիտական աշխատաժողովների, գիտաժողովների և համատեղ հրապարակումների առումով: Վրաստանի տարբեր համալսարաններ Նոյնյաես ակտիվորեն համագործակցում են Եվրամիության երկրների առանձին կրթական և գիտական կենտրոնների հետ՝ սկսած ուսանողների փոխանակումից, վերջացրած երկարատև գիտական գործուղումներով: Այս առումով հատկապես ուշագրավ է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի և Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի համագործակցությունը: Վերջին տարիների ընթացքում բազմաթիվ վրացի երիտասարդներ հիշյալ համալսարաններում անցել են մագիստրոսական, դոկտորական և ետդոկտորական դասընթացներ և պաշտպանել մագիստրոսի և դոկտորի գիտական աստիճան: Սոխումիի պետական համալսարանը տարիներ շարունակ բեղմնավոր համագործակցում է Գերմանիայի Վիտենբերգի համալսարանի հետ: Սոխումիի համալսարանի մի քանի շրջանավարտներ դոկտորանտուրայի ծրագրեր են անցել Նշված համալսարանում և այստեղ էլ ստացել դոկտորի գիտական աստիճան: Հարկ է նշել նաև, որ ինչպես Վենետիկի, այնպես էլ Վիտենբերգի համալսարանների դեպքում վրացի ուսանողներն աշխատում

Էին, ուսումնասիրում, հետազոտում և պաշտպանում էին իրենց գիտական աստիճանները վրացական մշակութային ժառանգության հուշարձանների որոշակի խնդիրների շուրջ (Քուռ-Արաքսյան, Թրիալեթի, Ուշ բրոնզի դարաշրջանի կամ Կոլխյան մշակութային հարցերի վերաբերյալ):

Եվրոպական միության տարբեր համալսարաններ և հետազոտական կենտրոններ ակտիվորեն հրատարակում են վրաց գիտնականների աշխատություններ (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն լեզուներով) Վրաստանի մշակութային ժառանգության հուշարձանների մասին, որպեսզի դրանք հասանելի լինեն մնացած աշխարհի համար: Հատկանշական է, որ վրացի հեղինակների հրապարակումներն իրականացվում են այդ համալսարանների և գիտական կենտրոնների ծախսերով և մի քանի տասնյակ հազարավոր եվրոներ են ծախսվում Եվրամիության անդամ երկրների կողմից վրացական մշակութային ժառանգության գիտական հետազոտությունների և հրատարակությունների վրա: Այստեղ հարկ է անապաման նշել, որ հետազոտության այս տեսակը նպաստում է եվրոպացի գիտնականների ներգրավմանը վրացական մշակութային ժառանգության գիտական ուսումնասիրության գործընթացի մեջ և վրացական ժառանգության հանրամատչելիացմանը ողջ Եվրոպական միությունում և ընդհանրապես աշխարհում: Վրաստանի մշակութային ժառանգության հանրահռչակման գործում առանձնահատուկ դեր է շնորհվում Վրաստանի ազգային թանգարանին, որը գործընկերային հարաբերություններ ունի Եվրամիության այնպիսի թուփ թանգարանների հետ, ինչպիսիք են «Լուվրը», «Պրադոն», «Պերգամոն թանգարանը», «Կապիտոլիումը» և Եվրոպայի այլառաջատար թանգարանները: Դրա ապացույցն է նշված թանգարաններում ազգային ժառանգության այնպիսի կարևորագույն հուշարձանների ցուցադրումը, ինչպիսիք են Կոլխյան ոսկեգործությունը, Վրաստանի հնագույն մետաղագործությունը, Փիրոսմանիի գլուխգործոցները և այլն: Հարկ է նշել նաև այն իրականությունը,

որ որոշ եվրոպական թանգարաններ նույնպես իրենց հավաքածուների ցուցահանդեսներ են անցկացնում Վրաստանում, և վերջին տասնամյակը չափազանց բեղմնավոր էր այս առումով, երբ վրացի արվեստասերները կարողացան Վրաստանում դիտել իտալական Վերածննդի դարաշրջանի կամ ժամանակակից արվեստագետների գլուխգործոցները: Այս համագործակցությունը հաջողությամբ շարունակվում է, և ապագայում մի շարք վրացական ցուցահանդեսներ կանցկացվեն Եվրամիության հայտնի թանգարաններում, և վրացի այցելուները Վրաստանում կտեսնեն բազմաթիվ համաշխարհային գլուխգործոցներ:

Պետք է անպայման նշվի նաև, որ եվրոպացի մասնագետները ակտիվորեն մասնակցում են Վրաստանում ազգային և կրոնական փոքրամասնությունների ժառանգության վերակառուցման ու վերականգնման գործին, և այս առումով հարկ է նշել Թբիլիսիի Սուրբ Գևորգ հայկական առաջնորդանիստ տաճարի օրինակը, որի որմնանկարների վերականգնմանը մասնակցել են իտալացի վերականգնողներ:

Այն, որ Վրաստանի զարգացման ուղին եվրոպական ընտրությունն է, լավ է դրսևորվում մշակութային ժառանգության օրինակում: Կարելի է բերել բազմաթիվ այլ կոնկրետ օրինակներ ևս, բայց կարծում ենք, որ վերը նշվածները մեզ բավականաչափ ցույց տվեցին, թե ինչպես է Եվրոպան ձգտում, որ վրացի ժողովուրդը պահպանի և ապագա սերունդներին փոխանցի դարերի ընթացքում ստեղծված մեծ մշակույթը՝ եվրոպական մշակութային ժառանգության անբաժանելի մասը:

Օգտագործված աղբյուրներ.

<http://www.parliament.ge/ge/gavigot-meti-evrokavshirtan-asocire-bis-shetanxmebis-shesaxeb/associationagreement1>

<https://matsne.gov.ge/ka/document/view/30346?publication=36>

<https://matsne.gov.ge/ka/document/view/21076?publication=14>

http://www.parliament.ge/files/714_9879_341434_kulturuli_memkvid_dacva.pdf

<http://memkvidreoba.gov.ge/>

ISBN: 978-9941-9702-6-9

